

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, ՓԵՏՐՈՒԱՐ 15, 1932

ԹԻԻ 1-2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Որո՞նք են Բողոքականները

Ապրելու Կամքը

ՎԵՐ. Հ. Հ. ԲԻԿՁ

Տ. Ճ. Խ

ՀՈԳԵՒՈՐ

Տերոզը Տունը

Քրիստոնեական Կեանքը

Ծնունդէն Վերջը

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՓՐՈՅ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ

ՎԵՐ. Կ. ՍԹԱՆՊՈՂԼԵԱՆ

ԿԵՆՍՍԱԳՐԱԿԱՆ

Բեմգի Մեքսոնայ

ՎԵՐ. Յ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

Կիլիկիա Անուան Ծագումը

Հռոմ

ՎԵՐ. Ե. ԳԱՍՈՒՆԻ

* * *

ԿՐԹԱԿԱՆ

Կրթական Հարցը

ՓՐՈՅ. Յ. Թ. ԳԱՅԱՆԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

Գերագույն Մանրագիտակը

Գիտական Քրոնիկ

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ԳԱՂԵՅ՝ Հ. ՓՈՂԱՏԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

Մեռակ Զեմ

ԱԿԻԼԻՆԷ

ԱՅԼԵԻԱՅԼ

«Նոր Աւետարան» եւ Մեր Պահանջները

ՓՐՈՅ. Զ. ՊԵՋՃԵԱՆ

«ՋԱՆԻՑ»Ի ԷՋԸ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԳՈՂԵՃ ՀԱԼԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, քաղաքացիական 150 ղրուշ սուրի. Սուրբոյ համար, և մէկու կէս տալար՝ աւելի բաւար երկիրներու համար:

ՍԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Յաւազ կը յայտնենք որ այս գոյգ թիւը, զոր Յունի. Յ1ին հրատարակել մտադրուած էր, տպարանական անկանոնութեանց և դժուարութեանց պատճառաւ կարելի չեղաւ ատենին լոյս հանել:

ՆՈՒԷՐ «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»

ՏԻԱՐ Մ. Մ. ՇԱՄԱԼԵԱՆ մէկու կէս տալար, «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»-ի մէկ տարուան բաժանորդագիրնը, կը նուիրէ:

ԴԱՄԱՍԿՈՍԷՆ ՏԻԿ. Հռիփսիմէ Պէքեարեան կէս տարուան «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ» կը նուիրէ Թորոս Շանլեանի՝ Հալէպի Բէսսօղիէն Վեր. Ա. Պէրպէրեան մէկ տարուան «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ» կը նուիրէ Տիար Ս. Անթոյեանի՝ Պորմոզա, Արժանի թին:

ՏԻՏՐՈՅԹԷՆ Տիար Յարութիւն Շալեան Յ. 5 տալար կը նուիրէ «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»-ի:

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՍԿ, Ամսաթերթ 4 էջերով, Պաշտօնական Հրատարակութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Ա. տարի, Ա. թիւ Բժն. 10 ֆրանք:

ՀԱՅ ԽԱՉԱԿԻՐ, 4 մեծագիր էջերով, Բժն. տարին. 1 տալար: Հասցէ: H. M. Hovagimian, 125 W. Chestnut, Chicago, Ill.,

ՍՈՒՐԻՈՅ Հ. ԱՒԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԺՈՂՈՎԸ

Այս տարի, Սուրբոյ Հայ Ա. ե. Կեղեցիներու Միութեան Ժողովը, Եթէ Տէրը կամի, տեղի պիտի ունենայ Պէրպէր մէջ և պիտի տեւէ Մարտ 30, Չորեքշաբթիէն սկսեալ մինչև Ապրիլ 5, Երեքշաբթի:

ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»-Ի ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է: Այս կէտը նկատի առնելով «Նոր Աւետարներ»-ի խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՑԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 25 իրական պատմութիւններ և պատմուածքներ: Ամէն պատանի, ինչպէս նաև զաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն: Գինն է 25 ղրշ. սուրիական կամ 50 սէնթ (Ամերիկայի Եգիպտոսի համար): Դիմել խմբագրութեան հասցէին:

ՆԱԽ ԴԻՄԵՑԷՔ

ՀՐԱՆՏ ՔԵՕՇՔԷՐԵԱՆԻ

185 թիւի ԽԱՆՈՒԹԸ, ԽԷՆՏԷՔ, ուր պիտի գտնէք՝ ճաշակաւոր, տոկոս և աման

ԿԱՆԱՆՑ ՉԵՌԻՒ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ, ԹՂԹՂԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԿՕՇԻԿՆԵՐ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ 1931 ՏԱՐԻՈՅ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆՔ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԿԱ. — «Նոր Աւետարան»-ի
Դ. Տարին 3-5:

Տ. Ճ. ԽՐԼՈՐԵԱՆ. — Ներկայ Հայ Կեանքը
4-6, Վէրքը եւրո Պիտի Սպիտանայ 39-41,
Հոսանքներ 91-92, 117-118 Պատմական
Դէպքը 119-120, Եկեղեցին և Գործիչ-
ները 147-149, Զբոսանք և Գործ 171-
172, Մեր Կրթական Հունձքը 189-90,
Մամլութեան Զիւտնդանիքը 190, Հա-
մադգային Մարմին մը Անհրաժեշտ է
303-304, Դէպի Ռուս 323-325, Ճիշդ
Դատենք 342-345, Սքող Ավ Ռիւիսի
Սուրբիոյ Մէջ 367, Կինը Արեւելքի
Մէջ 383-84, Ինչ որ Անհրաժեշտ է 403,
«Նոր Աւետարան»-ի Ուղղութիւնը
404, Հաւասարակշիռ Կեանք 423, Քրիս-
տոնեայ Հրեաները 424, «Բամ Փորո-
տան» և Հարսանիքը 425, Օրուան
Նշանները 443-445, Ժողովական Ե-
կեղեցիին Ներկայ Միտումը 463-465,
Հոգևոր Փորձաքննութիւն 503-504,
«Նոր Աւետարան» Արդիապաշտ է թէ
Հիմնապաշտ 523-524:

ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՓՐՈՑ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ. — Եկեղեցին և
Արտաքին Աշխարհը 7-8, Ժողովական
Եկեղեցին և Հաւատոյ Հանգանակնե-
րը 127-128:

Տ. Ճ. Խ. — Ինչ որ Քեզ Սիրելի Կ'ընէ
25, Երգը և Կեանքը 25, Ինչ է Ամէն
Եկեղեցիին Արժէքը և Թերութիւնը
69, Ենթադրէ որ 70-71, Յաղթական
Կեանքը 174, Պաշտօնականները . . . և
Եկեղեցին 310, Ինչ որ Ճիշդ Ինձի
Պէտք է 355, Հրեան և Մահամիտ
Դուստրը 426, Քակաւա և Կանտի
505, Ամերիկեան Պորտի Հիմնական

Սկզբունքները 505, Քարոզիչ Մը Որ
Չուզեր Խօսիլ Բայց . . . 506: (Թրգ.)

ՎԵՐ. Կ. ՍԹԱՄՊՈԼԵԱՆ. — Քիչերու
Ճամբան 43-44:

ՎԵՐ. Հ. Հ. ՐԻԿԱ. — Աւագ. Եկեղեցիին
Կոչումը 47-46:

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ. — Սէրը՝ Քրիստոսի
Օրէնքին Լրումը, 44-45, Մեր Զաւակ-
ներուն Հոգեւոր Սնուցումը 384, 386,
407-409, Մեր Աստուածը 487-488:

Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ. — Քս. Ի Վարդապետու-
թեան Հոգին 53-54, 123-124, 153-
155, 191-192, 367-368:

ՅՐ. Ա. ՎԱՍՈՅԵԱՆ. — Վկայութիւնս 55-
56:

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Աստուա-
ծաբանութիւն և Մեր Ժողովուրդը
73-75, Հանգանակի Դիրքը Քրիստո-
նէութեան Մէջ 364-366, 387-388, 429
430, Տարեգարծի Մը Առթիւ 529-531:

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱՉԵԱՆ. — Տկարութեան
Զօրութիւնը 93-95:

Հ. Գ. ՈՒՋՈՒՆՊՈՂՈՍԵԱՆ. — Ինձի Հա-
մար 100-102:

Յ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ. — Պատգամներ ըՍ-
թանի ճանաչ 105-107:

ՎԵՐ. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ. — Դէպի Յա-
նա՞ թէ ետ 120-122, 149-151, Սբ. Գիրքը
Ինչե՞ր Կ'ընէ 390-91:

ՍԹԻԼ ԱՅԱՆ ՕՂԼՈՒ. — Մեր Միակ Քարո-
զիչը 155-157, 176-178, 197-199:

ՎԵՐ. ՅԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ. — Եկեղեցական
Պաշտօնին մէջ Բարեփոխութեան Մա-
սին Առաջարկ 347-349, 412, Մեր Ս.
Գիրքը 409, 447-448:

ՎԵՐ. Ե. ԿԵՕՔԿԵՉՉԵԱՆ. — Ս. Գրքի Աբ-
ժէքն ու Դիրքը 391-392:

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ. — Տէրոջ Ձեռ-
քին Մէջ 427-428:

Յ. ՄՍՐԼԵԱՆ. — (Թրգ.) Ծնունդի պատգ-

գամ մը 528.
 2. — (Թրգ.) Ս. Գիրքը 331-332.
 Ե. ՏԷՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ. — (Թրգ.) Առա-
 լել յեժ Գործեր 532-534, Եթէ Բը-
 րիստոս եկած Չըլար 534-535.
 Մ. Մ. ԱՅՃԵԱՆ. — Ճշմարտութեան
 Փշրանքներ 535:

ԲԱՆԱՍԵՂՇԱԿԱՆ

Հ. Թ. ՅԱԿՈԲԵԱՆ. — Ուղերձ «Նոր Աւե-
 տաբեր» 18, Հոգիիս Ծարաւը 78,
 Իմ Տաճարը 180, Հոգիիս Յարութիւ-
 նը 309, Հոգիիս Վերելքը 450-451,
 Յուսածին Տառապանքը 543:
 ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ. — Բրիստոս՝ Մեր Օ-
 բինակը 107:
 Կիւպէրթ Թոփալեան. — Դէպ ի Վեր
 544:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ

ՓՐՈՅ. Զ. ՊԵՋՃԵԱՆ. — Անկեղծ Ըլլանք
 8-10, Վարդանանց Տօնին Պատգամը
 97-98:
 ՏՈՔԹ. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ. — Ունակութիւն 6:
 ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ. — Մեծա-
 ռազմութիւն 15-17, Անյաղթելի Մա-
 չը 490-491:
 ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ. — Ազգասիրու-
 թեան Սեւերը 13. Բրիստոնեայ Ազ-
 գասէր 129-132:
 Տ. Ճ. Խ. — (Թրգ.) Գնդապետ Լինտպէրկի
 Գաղտնիքը 122, Բանտերը Ինչպէս
 Կը Գոցուին 373-374, Նոր Բարեկամ-
 ներ շահելու արուեստը 430-432:
 ԶԱՆԱՍԷՐ. — (Թրգ.) Ընտանեկան և
 Մայրական Խորհուրդներ 178, Կնոջ
 Անունը 179:
 ՎԵՐ. Ս. ԱՂՊԱՊԵԱՆ. — Իրական Ար-
 ժանիքը 328-329:
 ՎԵՐ. ՅԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ. — Եկեղեցին և
 Անոր Ընկերային Ծառայութիւնը 507-
 509:
 Բ. ՏԻՔԻՃԵԱՆ. — Մարդկային Տիպեր 541:

ՊԱՏՄԱԿԱՆ

ԻՐԱԶԵԿ. — Իրականութիւն և ոչ երե-
 ւակայութիւն 18-20:
 Տ. Ճ. Խ. — (Թրգ.) Թէ Ինչու Նապոլե-
 տաս Թագաւոր Գահը Բաղտաստրին
 Թողուց 45-46, Հին Բրիստոնեաները
 Եւ Հեթանոսական Սովորութիւնը
 84, Հին Կազա Բազաքը 314, Մարդ-
 կային Հունձքը 524-527, Հոովմ 542-
 543:
 Կ. ԳՈՒՆՏԱԴՃԵԱՆ. — Ուրարտացիք 157-
 159, 371-373, 389, Համաշխարհային
 Պատմութեան մէջ Դեր Խաղացող Մեծ
 Դէմքեր և Դէպքեր 472-473, 511-512,
 540-541:
 Ղ. Տ. ՂԱԶԱՐԵԱՆ. — Քիւրտիստանի Ա-
 լետ. Գործին Պատմութիւնը 331-333,
 351-352, 492-493:
 ՎԵՐ. ՅԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ. — Քէսապ Ինչ-
 պէս որ էր ասկէ 38 տարի առաջ 434-
 436:

ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Տ. Ճ. Խ. — Թրգ. Հիւանդութիւնները Կ'ո-
 րոշեն Աշխարհիս Բախտը 27-29, Ջրի-
 մուռի Սննդական Արժէքը 394-395,
 Խոր Շունչ Առ 405-406, Մարդուն
 Ծագումը 506, Հսկայ Մողէսը 544:
 Ե. Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ. — Փորձաքար Մը
 Մարգարիտներու Համար 29:
 Յ. Ն. ՊԱՊԻԿԵԱՆ. — Շունեկու Հաւա-
 տարմութիւնը 30:
 ՅՀ. ԱՀԱՐՈՆԵԱՆ. — Կոյրերը Առաջ-
 նորգող Շուներ 30:
 ՅԿ. ՔԷՆՏԻՐՃԵԱՆ. — Շան Կրթութիւ-
 նը 31:
 ՏՈՔԹ. Ա. ԱՊԸՀԱՅԱԹԵԱՆ. — 1930 ի
 Գիտական Եւրոպացիները 57-58,
 77, 136-137, Կրօնք և Գիտութիւն
 311-312:
 ՏՈՔԹ. Յ. ՅՈՎՆԱՆԵԱՆ. — Կաթ 71-72
 98-100:

ՀԱՅԿ ՓՈԼԱՏԵԱՆ. — Գիտական Բրոնիկ
108, 138, 159—160, 181—182, 201,
312—313, 324, 354, 374—375, 397—
398, 437—438, 455—456, 474, 493—
494, 513—514, 530.

Ֆ. ԱԶՐԱԳ. — Սուրբա և Քիմիական
Արհեստներ 140—142.

ՏՈՔԹ. Ա. ՃէՊէճեԱն. — Արեւ Բժշկա-
կան Տեսակէտէ 49—51, Օգիւրեւոյթա-
րանական Ախտածին Երեւոյթներ
199—200, Երկուորեակներ 536—537.

ԶԱՄՖԻՐ ԵՒ ՊԻՆԷ. — Ծխախոտի ազ-
դեցութիւնը 470—471.

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՓՐՈՖ. Զ. ՊԷԶՃԵԱՆ. — Տնտեսական
Տաղնապը 349—350, Տնտեսական Տաղ-
նապին Պատճառները 412—414, Սթեր-
լինի Անկուճը 452—454.

Տ. Ճ. Խ. — (Թրգ.) Տնտեսական Ժողովի
Տեղեկագրէն 353, Երկրագործութիւնը
Փրկելու Համար 356, Սաւառնակի
Ճարտարաբուեստը 454, Անգլիոյ Թա-
գաւորին Թռչակը 455, Աշխարհիս Ոս-
կիի Քանակը 455.

ԿՐԹԱԿԱՆ

Տ. Ճ. Խ. — Ռուսիոյ Մէջ Կրթութիւնը
84.

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ. — Մեր Առած Դաս-
տիարակութիւնը Ինչպէ՞ս Կրնանք
Արժեցնել 307—309.

Ս. Գ. ՍԻԻԼԱԶԵԱՆ. — Քանի Մը Կարե-
ւոր Գիտելիքներ 1-6 Տարեկան Մա-
նուկին Մասին 369—371.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ. — Հօկայ քարո-
ղիչներ 11—12, 51—52, 75—76,
95—96.

Տ. Ճ. Խ. — (Թրգ.) Հնդկաստանի Խորհր-

դար գերմարդը, 88, Նախակրթա-
ւանի Աշակերտ Մը Որ Համալսարանի
Մը Նախագահը Կ'ըլլայ 84, Մուտիի
Կեանքին Գաղտնիքը 304—306, Ֆոր-
տի Գաղտնիքը 325—327, 353, Աղա-
մանդեայ Կեանքէ փշուրներ 346,
367—368, 392—393, 404—405, Ճորճ
'Մէթիւընի անմահ երգը 448—451.

ՏՈՔԹ. Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ. — Փրոֆ. Ա.
Լիքսան Պէզճեան 125—126.

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ. — Հաւատքի Տէր
Մայր Մը 151—152.

ՊԱՏ. Կ. Ս. ՖԱՐԱՃԵԱՆ. — Օր. Սիմա
Գուլուսեան 175—176.

Ք. — Փարթաւ Խ. Փարթամեան 377.

Յ. ՄԸՍՐԼԵԱՆ. — Թովմաս Ալվա Էտի-
սըն 485—486, 509—510, 537—538.

ՎԵՐ. Հ. ԿԷՕՎԳԱԼԱՅՃԵԱՆ. — Միսիս
Թովմաս Գրիսթի 512—513.

ԱՅԼԵԻԱՅԼ

Օր. Է. ՇԵՈՐՀՕՔԵԱՆ. — Զանից Ընկ. ց
Ը. Համաժողովը 21—22.

Յ. ՊԱԳԿԱԼԵԱՆ. — Թէ ինչու Զանգակ-
ները Հնչեցին 23—24.

ԱՐՏ. ԵՊՍ. ՍԻՐՄԷԵԱՆ. — Ուղերձ 26.

ՏՐ. Ճ. Ի. ՄԷՐԻԼ. — Ամերիկեան Պորտ,
41—42.

Տ. Ճ. Խ. — Պուլէվիկ Ռուսիա Եւ Կրօն-
քը, Ս. Գրոց Թարգմանութիւնը 172,
Դաւիթի Պարսատիկը 172, Նիկիական
Ակումբը 310, Աշխարհի Շրջանը 314,
Անգլիոյ Բնակչութիւնը 326, Պէյրու-
թի Համալսարանները 335, Զարմա-
նալի Կիները 465—67, Նաբուէտնի
Գիրքերը 545. (Թրգ.)

Յ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ. — Սաղուկեցիներ Եւ
Փարիսեցիներ 79—81.

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Մեր Պարտ-
քը Ասֆուրիյէի 103—104, Սրբազրու-
թեան Կարօտ Հալէպի Թղթակցին
330—331.

ՎԵՐ. Ս. ՄԵԼԳՈՆԵԱՆ. — Բաց Նամակ 109.

ՆՈՐ ԱՌԵՏԱԲԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,”

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ

ԽԶ. ՏԱՐԻ = 1932

«Հանդես Ամսօրեայ» հայագիտական ուսումնաքերը կը հրատարակուի Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան կողմէն աշխատակցութեամբ ազգային եւ օտար բանասէր-գրագէտներու:

Կը բնէ, կ'ուսումնասիրէ հայ մշակոյթի պատմութիւնն անցեալին ու ներկային մէջ. կը ծանօթացնէ հայագիտական աշխատասիրութիւնները հայ եւ օտար մամուլին մէջ. կը պահէ տեղեակ իւր ընթերցողները հայ գրական կեանքի ընթացքին:

Կը երաւիրուին բաժանորդագրուելու բոլոր հայ մտաւորականները, վաճառականները, տնտէսները, գործատէրերն եւ գրասէր հայրենակիցները:

«Հանդես Ամսօրեայ»ի տարեկան բաժանորդագիրն է ամէն երկիրներու համար

Հինգ տոլար:

Դիմել՝

Rédaction “HANDES AMSORYA”,
Wien, VII., Mechitharistengasse 4.

Բ. Մ. ԵՂԻԱՅԱՆ. — Բէլէմանները 132-136, Վուլթիւի եկեղեցին 468-69, 488-490:

ՎԵՐ. Կ. Յ. Յ. — Աթոռակից Կաթողիկոսի Օծման Առթիւ 139-140:

ԹՂԹԱԿԻՑ. — Վեր. Հ. Ատաուրեան կը տեսնէ 192-193:

ՅՈՎ. Հ. ՇԵՆՈՐՀՕՐԵԱՆ. — Հալէպի Կոյրերու Վարժարանը 193-94, Հայեր Հալէպի Հիւանդանոցներուն մէջ 436-37:

ՔՆՆԻՉ ՄԱՐՄԻՆ. — Մամուլէյնի Հիւանդանոցին Հաշիւները 194-197:

ԹՂԹԱԿԻՑ. — Քրահնիւմառի Թղթակցին

Մէկ Բացատրութիւնը 375-376:

ՏՐ. Ճ. ՄԷՐԻՆ. — Ամերիկայի Մէջ Մեր Անցուցած Օրերը 395-397:

ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ. — Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Արեւելեան մասին այց մը 415-417, 432-434:

ՎԵՐ. Ե. ԿԷՕՔԿԷՕԶԵԱՆ. — Հանրապետական Սպանիոյ Մէջ Աւետարանական Ազատութիւն 451-452:

ՎԵՐ. Ա. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ. — Եկեղեցիները եւ «Նոր Աւետարան» 483-484:

ՕՐ. Ս. ՇԵՆՈՐՀՕՐԵԱՆ. — Մօրս Աշակերտուհին 494-495:

ՄԻԷՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, ՓԵՏՐՈՒՍՐ 15, 1932

ԹԻԻ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՈՐՈՐՔ ԵՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ

Աւետարանտկան կրօնքը Հուտերի օրերէն ի վեր ամէնէն աւելի շեշտած է սա կէտը՝ թէ անձի մը անհատական հաւատքն է որ գերազոյն կարեւորութիւնն ունի: Բողոքականութիւնը առաւելապէս բողոք մըն էր պաշտօնականացեալ կրօնքին դէմ: Անիկայ բողոքեց սա գաղափարին դէմ՝ թէ եկեղեցին կրնայ շնորհել կամ մերժել փրկութիւնը, քանզի անիկայ պնդեց թէ ամէն մարդ իրաւունքն ու պարտականութիւնն ունի որոշելու իր անձնական յարաբերութիւնները Աստուծոյ հետ: Այս է Բողոքականութեան հիմը:

Այս բառերուն արտայայտած սկզբունքները մենք չենք լքած. բայց գործնականին մէջ անոնք ամէն օր կ'ուրացուին: Եթէ ես գիւղ մը երթամ եւ հարցնեմ թէ «ոս քանի՞ Բողոքականներ կան», շիտակ պատասխանը պիտի ըլլար թուել այն մարդերը՝ որոնք իրենց հաւանութեամբը Յիսուսը իբր իրենց Փրկիչը ընդունած են եւ Անոր հնազանդելով կ'ապրին: Բայց մինչեւ հիմա ոնէ մէկը այս շիտակ պատասխանը ինծի չէ տուած: Ընդհակառակը պատասխանը միշտ իրական թիւին հինգ կամ

ստուր անգամը աւելի եղած է. քանզի սովորութիւն եղած է բողոքական համարել բոլոր անոնք՝ որոնք բողոքական ծնողներ թանցած են, կամ որոնց անունները կառավարական տոմարներուն մէջ բողոքական արձանագրուած են: Եւ այս միշտ ընդունուած է՝ առանց երբեք նկատի առնելու թէ արդեօք անոնք անձնապէս բողոքական, կամ նոյնիսկ քրիստոնեայ են:

Միայն գիւլիները համբերու այս սովորութիւնը բաղդատաբար անկալեալ պիտի ըլլար՝ եթէ անիկա ասկէ շատ աւելին չէր նշանակեր: Իրողութիւնը սա է որ երկու գաղափարներ կան Բողոքական եկեղեցիին ինչ ըլլալուն մասին: Մէկը Նոր Կտակարանի գաղափարն է, որուն համեմատ եկեղեցին ընկերակցութիւնն է անոնց՝ որոնք ջերմօրէն Յիսուսի կը հաւատան եւ կ'աշխատին Անոր հնազանդելով եւ Անոր համար ապրել: Միւսը Թուրք կառավարութեան գաղափարն է, որուն համեմատ կառավարական տոմարներուն մէջ անունները արձանագրուած բոլոր մարդերը, եւ անոնց զաւակներն ու թոռները կը կազմեն եկեղեցին:

Չեմ հաւատար որ մեզմէ ոեւէ մէկը ըսէ՝ թէ թուրք կառավարութեան գաղափարը շիտակ է և նոր կտակաբանինը՝ սխալ։ Եւ սակայն Սուրիոյ Հայ Լիւիտ. եկեղեցիները թուրք կառավարութեան սկզբունքները որդիորած են և անոնց համեմատ ալ կը շարժին եկեղեցիի ամէնէն կարեւոր և ամէնէն կենսակոն գործերուն մէջ։ Օրինակ մը միայն տամ։

Եկեղեցի մը կայ որ հովիւ չունի։ Ո՞վ պէտք է հրաւիրէ հովիւը։ Նոր կը տակարանի իմաստով եկեղեցին այս քննելու իրաւունք չունի, բայց կառավարութեան հասկցած իմաստով եկեղեցին իրաւունք ունի։ Ենթադրեմք որ երկու թեկնածուներ կան։ Ասոնցմէ մէկը հոգեւոր ոյժի տէր, աղօթքի մարդ մըն է և հոգիները փրկելու սիրով կը տառապի։ Իսկ միւսը պերճախօս քարոյիչ մըն է և աշխարհիկ, բայց հոգեւոր կեանքէ զուրկ։ Եկեղեցիին համար ո՞րը պէտք է։ Ճշմարիտ եկեղեցին անշուշտ առաջինը պիտի հրաւիրէր։ Բայց մեծ թիւով մարդիկ կան որոնց անունները իբր Բողոքական արձանագրուած են, և իբր հոգեւոր տուրք մի քանի դահեկան տալու կը յօժարին։ Եւ այս երկրորդ դասակարգը կրնայ արգելել որ լաւագոյն մարդը հրաւիրուի, և կրնայ պնդել որ իրենց տեսակէն հովիւ մը հրաւիրուի։

Բարեբախտաբար հարցը միշտ այս ձեւով չի ներկայանար, և այդ տեսակ թեկնածուներ չենք ունենար։ Բայց ուրիշ կերպերով չար սկզբունքը չարիք կը գործէ։ Քանզի իրողութիւնը սա է որ եկեղեցական գործերը վարողը ճշմարիտ եկեղեցին չէ, եթէ խնդիրը քուէարկութեան դրուի։ Դժբախտաբար Բողոքական եկեղեցին միւս եկեղեցիներուն ընկերացած է՝ 100 տարի առաջ թուրք կառավարութեան կողմէ պարտադրուած կեղծ չափանիշը ընդունելով

որուն համար գոյ եղող պատճառը հիմա ալ գոյութիւն չունի։

Սուրիոյ Հայ Աւետ. եկեղեցին պէտք է այս հարցը նկատի առնէ, և այս երկու գաղափարականներուն մէջէն պէտք է սելիմութեամբ մէկը ընտրէ։ Եւ այս ընկելու առեն պէտք է սա իրողութիւնները մտքին մէջ ունենայ։

1. Այն իրողութիւնը՝ թէ մէկու մը անունը կառավարական տոմարին մէջ իբր բողոքական արձանագրուած է, իրականին մէջ աւետարանական քրիստոնեայ մը ըլլալուն հետ ոեւէ յարաբերութիւն չունի։

2. Մէկուն բողոքականի մը վաւակ ըլլալը չի ցուցնէր թէ ինքն ալ բողոքական է։

3. Այն իրողութիւնը թէ մէկը աւետարանական վարդապետութեանց կը հաւատայ, չի փաստեր թէ նա իր սրբաւորն մէջ այդ եկեղեցիին հետ միացած է։

4. Հոգեւոր տուրք վճարելը՝ առանձինն՝ անարժէք և անիմաստ պայման մըն է անդամակցութեան։

5. Այն որ միայն անունով աւետարանական է և ոչ՝ Յիսուս Քրիստոսի իր անձնական հաւատարմութեամբը, եթէ եկեղեցիի մէկ մասը կ'ընդունուի, վրտանգ մըն է եկեղեցիի ճշմարիտ կեանքին համար։ «Ան որ ինծի հետ չէ, ինծի հակառակ է», ըսաւ Յիսուս։

6. Խախտաւ հիմի վրայ շինուած է ոեւէ կազմակերպութիւն մը՝ քրուն գործերը այնպիսի մարդերու կողմէ կը կառավարուին որոնք էապէս անոր սկզբունքներուն հետ համաձայն չեն։ Մեր եկեղեցիները ճշմարիտ և հաստատ հիմի մը վրայ բերելու մէջ մեծ դժուարութիւններ կան, որոնք քաղաքական (civil), դրամական, ընկերային, կրթական և այլն հանգամանք ունին։ Բայց Յիսուսի հաւատացողները առաջին դարերու մէջ կ'ակնկալէին և կը

ԱՊՐԵԼՈՒ ԿԱՄՔԸ

«1931 տարին դարագլուխ մըն է,» կը գրէր օտար հրապարակագիր մը նըկատի առնելով աշխարհի տնտեսական և ընկերային կեանքը: Անգլիական մեծ հանդէս մը իր մէկ յօդուածովը ուրուագծել կը ջանար ներկայ Անգլիան և ասկէ դար մը առաջուանը, ցուցնելով անգլիական ընկերային կեանքին մէջ յառաջ եկած մեծ փոփոխութիւնները: Անուրանալի է որ փոխանձութի շրջանին մէջ կը գտնուէին, որ շատ մը խորհողներուն համար անհախճաթաց ըլլալ կը թուէր շատ մը տեսակէտներէ: Բայց դիւրին չէ որոշել թէ ո՞ր տարին է այն գիծը որ հին դարաշրջանը կը բաժնէ նորէն: Ենթադրեալաբար ամէն մէկ տարին նոր դարաշրջանի կեանքին ծնունդ տուող տարրեր կը պարունակէ:

Մենք նպատակ չունինք ներկայ համաշխարհային կեանքի մասին խօսիլ, այլ հայ կեանքի վրայ, և մասնաւորապէս Սուրբիոյ մէջ, կարճ ակնարկ մը նետելով դիտողութիւն մը ներկայացնել: Հայ կեանքն ալ իր կամքէն անկախ ստեղծուած նոր պայմաններու հարկադրանքին տակ փոխանցումի շրջան մը կ'անցնէ: Եւ որպէսզի անոր մէջէն յաղթող դուրս ելլենք անհրաժեշտօրէն պէտք ունինք կորովամտութեան:

յօժարէին իրենց քաղաքական, ընկերային, դրամական իրաւունքները Յիսուսի համար ապրելու սիրուն զոհել: Ափսոս այն եկեղեցիին՝ որ իր քաղաքային և այս աշխարհի ուրիշ իրաւունքները չհանդու համար Յիսուսի հանդէպ ունեցած իր հաւատարմութիւնը զոհելու պատրաստ կէտին հասեր է:

Հ. Հ. ՐԻԿԶ

Մենք անոնցմէ չենք որ յոռետես կամ ծանծաղամտօրէն լաւատես են ներկայ ընդհանուր հայ կեանքին եւ կամ անոր առէ մէկ մարդին մասին: Մենք շատ բան կորսնցուցած ենք, բայց ոչ ամէն բան: Հայ սեզը՝ նոր կեանք մը կերտելու մէջ յուսահատական պայմաններու տակ իր պայքարովը, կարգ մը նուաճումներովը ցուցուց թէ քակարին անկրար եւ հաստատ կը պահէ իր անկրկնելի կամքը:

Ժողովուրդները թէպէտ կրնան կոտորակուիլ բայց չեն կրնար սպաննուիլ, այլ կը մեղմին: Իսկ մահուան ամենակարեւոր բայց չարագուշակ նշանն է ապրելու կամքին չզոյլթիւնը: Շատ մը օտար պատմաբաններու և խորհողներու համար առեղծոսածային հարց մըն է թէ այս փոքր բայց տառապանքով մեծ ժողովուրդը թուրք և ինչպէս քաղած է այն ոյժը, որ իր մէջ ապրելու փափաքը մշտարժարժ պահած է: Քանի ամէն զոհողութեան գինով այս ապրելու կամքը չի թաւաճար, լաւագոյն օրերու մասին յոյսը արդարացնող կարեւոր պատճառ մը կրնանք ունենալ: Ուստի պէտք է քաջալերել և զօրացնել այն բոլոր ազգակները որոնք ցեղին մէջ այս ապրելու կամքը զօրաւոր կը պահեն: և պէտք է դարմանել ախտավարակ մտայնութիւնը և գործունէութիւնը, որոնք պարտաւիր կը վատնեն մեր ուժերը: և կ'արժէ ճիշդ հոս յիշել երկու կէտեր:

Մեր կրօնական, կրթական, ընտանեկան մշակութային կեանքին մասին միշտ յոռետեսօրէն արտայայտուիլ, թէ՛ բեմերէն և թէ՛ մամուլի միջոցաւ, և միշտ մեր կեանքէն ախտաւոր պատկերներ, անբարոյիկ դրուագներ, յուսալքիչ

պատմութիւններ՝ շատ անգամ գունաւորուած գիտողին ախտաւարակ երեւեկայութեամբը՝ հրապարակել շատ զէշ կերպով կ'ազդէ թէ արտայայտող անհատին և թէ լսող կամ կարդացող անհատներուն միտքին, հոգիին և ջղային դրութեան վրայ: Խեղճ և անտէր ազդմըն հնք, մեր ընտանեկան որբութիւնը կորսնցուցած հնք, մեր դպրոցները վերջին ծայր ինկած վիճակ մը կը պարզեն, մեր եկեղեցիները և հոգեոր հովիւները երենց պաշտօնին մարդերը չեն, ժողովուրդը եկեղեցիներէն սնունդ չ'ստանար, ամէն կողմ ինկածութիւն և ամէն կեք պ'ջշուառութիւն: Ահա ասանք են շատ մը մարդոց գրիչին և լեզուին նիւթը: Ասոնք՝ Հայ կեանքի իբր ընկերային, կրթական, բարոյական կամ հոգեոր բարեկարգիչը՝ կեղծ մարգարէի թոնով կ'սկսին իրենց ախտածին էութեան այս վնասակար ապրանքը վաճառքի հանել:

Ասիկա չի նշանակեր թէ մեր կացութեան գիտակից չըլլանք, եւ մեր վէրքերուն անզոյալ ըլլանք և մեր քըննադատի նշգրտակը երբեք չգործածենք: Ոչ, մենք պէտք ենք իրատես ըլլալ, մեր կեանքը տեսնել իր իսկութեամբը:

Բայց սխալ է միայն մեր յոռի բաներէն ճառել, և մեր բոլոր իրական կամ երեւակայական տգեղութիւնները պարզել, միշտ այնպիսի կերպով մը որ անոնք միայն կործանարար ազդեցութիւն մը կը թողուն: Մեր ամէն մէկ խօսքը եւ ամէն մէկ արարքը պէտք են նոր կորով ներշնչել, նոր կենսունակութիւն մը ներարկել ժողովուրդին կեանքին, որպէս զի ան բոլոր այս աննպաստ պայմաններու մէջէն իր գլուխը վեր ցնցելով կարենայ յաջողութեամբ իր ճամբան գրտնել:

Մեր կենսունակութիւնը պահելու համար երկրորդ կարեւոր կէտն է ներքին և արտաքին բոլոր ճակատներու վրայ խաղաղութիւն հաստատել: Մեզմէ դուրս ամէն ժողովուրդի, ցեղի, ազգի հետ և մեր մէջը իրարու հետ խաղաղասէր և բարեկամական յարաբերութիւններ մշակելու ենք: Պէտք ենք ամէն ջանք թափել բարեկամներ շահելու եւ պէտք է խուսափինք հին թշնամութիւնները արծարծելէ և նորեր պատրաստելէ:

Ուստի 1932 ի միջոցին այսպէս ապրիլ:

Տ. Ճ. Խ.

ՏԷՐՈՋԸ ՏՈՒՆԸ

Գրեց՝ ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆ

Խօսքը տառականապէս հասկըցուելու է: Տէրոջը Տունը կը նշանակէ տուն մը որ իսկապէս Աստուծոյ կը պատկանի: Ոչ՝ թէ անոր մէջ մարդիկ գործ չպիտի ունենան, ընդհակառակն, կ'աւելակալուի որ ունենան, բայց Աստուծոյ ինքը գերազանցապէս, ախտաւարակապէս պիտի գործէ: Հոգ Աստուած աւագ բնակիչն է, իսկ եկեղեցին Անոր հրա-

ւիրեալ հիւրը: Մէկ բառով, Աստուծոյ ժամադրաւայրն է տեղը:

Տեղին նիւթական հանգամանքները հարկաւոր են, բայց կարեւորագոյն չեն: Արդարեւ գեղարուեստը իր կոչումը ամենէն արժանաւորապէս կը կատարէ այն տոտեն երբ Աստուծոյ տուն մը շինելու կը նուիրուի: Եւ սակայն, ո'չ ատաղձը, ոչ իսկ արուեստն է որ վայրը

սրբավայր կը կայացանէ, հապա տէ-
րունական ներկայութիւնը: Շէնքը
կրնայ ըլլալ միջնադարեայ հոյակապ
կաթողիկէ մը կամ Բուէյքըրներու ժո-
ղովարան մը: Թէ՛ մէկուն թէ՛ մէկաւրին
մէջ սուրբ և սրբացուցիչ բանը անտե-
սանելի էակին իրական մատչումը և
ինքնայայտութիւնն է:

Երկրպագութեան եղանակը գէթ չա-
փով մը մշակոյթէ և ճաշակէ կախում
ունի: Ոմն կը պահանջէ աշխատասիր-
եալ, գեղեցիկ, խնկաբոյր արարողու-
թիւն մը: Այլ ոմն կը նախընտրէ խո-
տորէն անշուք և անպաճոյճ կարգ մը:
Ո՛չ մին քան զմիւսն լաւ է: Երկուքէն
ալ լաւագոյնը կայ: Երկուքն ալ ստո-
րադաս և սպասարկու ևն գերիշխաննը-
պատակին որ է վաստուած պաշտելի ը-
նել պաշտողին հոգիին մէջ: Ո՛չ աւե-
լի ո՛չ նուազ: Ասով պիտի կշռուի պաշ-
տամունքին արժէքը: Անոր մէջ ոե՛ւէ
մաս պատշաճ և անհրաժեշտ է ինչ չա-
փով որ կը ծառայէ երկրպագուն Աս-
տուծոյ մատուցանելու:

Եկեղեցւոյ առաջնորդին պատասխա-
նատուութիւնը ճիշդ այդ կէտին մէջ կը
կայանայ: Մարդը միշտ վտանգի տակ
է: Կը փորձուի մոռնալ թէ տեղը Տէրո՛-
ջը Տունն է: Պաշտաման կարգը կրնայ
այնպէս ձեւել և այնպէս վարել որ Աստ-
ուած իր տան մէջ երկրորդական կ'ըլ-
լայ: Որքա՞ն զիւրին է գեղարուեստը
երկրպագութեան փոխանորդ ընել, հո-
գեկանը հոգևորին հետ շփոթել, մտապ-

մայլումը աղօթքի համազօր սեպել,
բառերու պերճութիւնը Սուրբ Հոգւոյն
ներգործումին տեղ զնել: Ուստի պաշ-
տոնեան պարտի շարունակ իր մարմինը
ճնշել և նուաճել մի գուցէ այն տեղը
որտեղ վրայ կայնոր է իր թատերաբեմը
դառնայ փոխանակ մնալու Տուն Աս-
տուծոյ:

Տէրջը Տունը եւակի կոչ մը կ'ուզէ
մեզի,— Եկու՛ր, Ունկնդրէ՛, Գնա՛:

Եկու՛ր: Աստուած է կանչողը: Տե-
ղը իր ժամագրավայրն է: Ինքը մեզմէ
յառաջ հոն եկած է: Եկու՛ր, ըսել կ'ու-
զէ, ըսելիք ունի՞մ որ պարտիս լսել.
տալիք ունի՞մ զոր պարտիս ստնել.
պատուիրելիք ունի՞մ զոր պարտիս ը-
նել:

Ունկնդրէ՛: Նա հոգ կը խօսի. եթէ
ո՛չ, հոգ երթալ ժամավաճառութիւն
պիտի ըլլար: Նա իր խօսելակերպը ու-
նի: Մարդու միջոցով կրնայ խօսիլ,
առանց մարդու ալ կրնայ: Եւ երբ կը
խօսի, Անոր խօսքը ուրիշ ամէն խօսքէ
կը զանազանուի: Աստուծոյ Տան մէջ
մեծագոյն պարտականութիւնը այդ
ձայնը լսելն է: Եւ մարդ պարտի ունկն
զնել որպէս զի կարողանայ լսել: Տէրը
իր սուրբ տաճարին մէջ է, Անոր երեսին
առջև լուռ կեցիր, ո՛վ բռնոր երկիր:

Գնա՛: Երբ Տէրոջը Տունէն կ'ելլես,
իջիր կեանքի պողոտան, ըրէ ինչ որ լը-
սեցիր, տուր ինչ որ առիր, ապրէ ինչ
որ սորվեցար:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՀԱՍԿԵԱՄ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(Անճնական Փորձառութեան Բաղադրատեսակ)

Գրեց՝ ՓՐՈՑ. Լ. ԼԵԻՈՆԵԱՆ

Քրիստոնէական կեանքի միակ հիմը
Քրիստոսն է: Քրիստոնեայ ըլլալ կը նը-

շանակէ Քրիստոսի մէջ ըլլալ, Քրիստո-
սի նմանիլ, Աստուծոյ զաւակ ըլլալ:

Շիտակ է որ ինքզինքս շատ մը կըն-
ճառտ հարցերու առջև կը գտնեմ երբ
Քրիստոսի և Աստուծոյ մասին կը խոր-
հիմ: Ասոնց կարեորութիւնը կը գնա-
հատեմ, անոնց մասին կը խորհիմ, և
ամէն օր ալ կ'աշխատիմ զանոնք աւելի
լաւ հասկնալու: Բայց ասոնց պատ-
ճառաւ երբեք չեմ մտահոգուիր, «քան-
զի շահէն քիչը գիտենք»: Եւ արդէն
Քրիստոսի ալ ինձմէ զգածը այդ տեսակ
գիտութիւն մը չէ, այլ անկեղծութիւն
և սէր է: Քրիստոս ըսաւ. «Ես ձեզ բա-
րեկամ անուանեցի»: Քրիստոնէութիւ-
նը՝ Քրիստոսի հետ բարեկամ ըլլալ է.
իսկ բարեկամութեան հիմը անկեղծու-
թիւնն է: Իմ մէկ բարեկամիս մասին շատ
մը բաներու մէջ կրնամ տպէտ ըլլալ,
բայց եթէ վստահութիւն և անկեղծ սէր
կան՝ ասիկայ կը բաւէ: Ամէնէն կարե-
ւոր հարցումը սա է. «Ձիս կը սիրե՞ս»
Ասոր պատասխանելով կ'ուզեմ ըսել.
«Այո Տէր, դուն գիտես որ քեզ կը սի-
րեմ»:

Քրիստոնէութիւնը Աստուծոյ շաւակ
ըլլալ է: Ձաւակ մը իր հօրը մասին
շատ մը բաներ չի գիտեր և չի կրնար
գիտնալ, բայց կրնայ անոր վստահիլ և
զայն սիրել: Հօր և զաւակի ճշմարիտ
յարաբերութեան համար ալ այս կը բա-
ւէ: Մեր Հօր Աստուծոյն մեղմէ զա-
ւակներէս ուզածը ահա այս է, զինքը
սիրել և իրեն հաւատալ է: Հաւատք՝
Աստուծոյ մասին գիտութիւն չէ: Մէկը
կրնայ Աստուծոյ մասին շատ բան գիտ-
նալ՝ առանց Աստուծոյ հետ անձնական
յարաբերութիւն ունենալու: Հաւատք՝
Աստուծոյ վստահիլ և յանձնուիլ է: Ա-
ռօրեայ փորձառութեան մէջ և կեան-
քի ամէն պարագաներուն տակ կ'աշխա-
տիմ զայն սորվիլ: Եւ ըսել կը սորվիմ.
«Ո՛վ հայր, ոչ թէ իմ կամքս, այլ Բո-
կամքդ ըլլայ»:

Քրիստոս՝ Լերան Քարաղին մէջ Աս-
տուծոյ և իր մասին կարգ մը գաղա-

նիքներ չյայտնեց, և մարդերէն զայն
չպահանջեց: Անիկայ ըսաւ. «Երանի
անոնց որ սրտով մաքուր են», «Երանի
խաղաղութիւն ընողներուն», «Սիրե-
ցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ
անիծողները»: Եւ այս բաները կատա-
րողները նմանցուց անոր որ իր տունը
ժայռի վրայ կը շինէ: Քրիստոսի խօս-
քերը կ'ընդունիմ իրենց այս պարզու-
թեանը մէջ, և կ'աշխատիմ զանոնք կի-
բարկել իմ կեանքիս: Ամէնէն զիւրին
բանը իր զրացին զատեցի է: Թշնա-
միին դէմ ճակատ բռնել զիւրին է:
Թշնամին սիրել դժուար է: Աշխարհ
լայն ճամբայէն կ'երթայ, ևս կ'ուզի մ
նեղ ճամբայէն երթալ:

«Մարմին գործերը . . . թշնամու-
թիւններ, նախանձներ, կոիւններ, բար-
կութիւններ . . . և բաժանումներ են»
Ես կ'ուզեմ անոնցմէ հեռու կենալ:
«Բայց հոգիին պառզը այս է. սէր, խն-
դութիւն, խաղաղութիւն, քաղճրու-
թիւն . . . հեղութիւն և ժուժկալու-
թիւն»: Ես կ'ուզեմ ասոնք նշանակէտ
ընել և ասոնց ձգտիլ, և իմ կեանքս այս
շափանիշով չափել: Քրիստոս բոլոր օ-
րէնքը երկու խօսքերու մէջ ամփոփեց.
«Բո՛ւ Տէր Աստուածդ սիրէ՛ քո բոլոր
սրտէդ և զբացիդ սիրէ՛ քո անձիդ պէս»:
Ես ա՛յս ընելու կ'աշխատիմ:

Քրիստոնէական եղբայրակցութեան
համար իբր միակ հիմ կ'ընդունիմ Քրիս-
տոսի հանդէպ անկեղծ և անխառն սէրը:
Իբր քրիստոնեայ քոյր և եղբայր կ'ըն-
դունիմ այն ամէն մէկ մարդը որ Քրիս-
տոսը կը սիրէ անկեղծօրէն, և կ'ուզեմ
անոր հետ գործակցիլ: Կ'ուզեմ թոյլա-
տու ոգիով վերաբերիլ ինձմէ տարբեր
խորհողներուն հետ: «Շնորհք այն ա-
մէնուն հետ՝ որոնք Տէր Յիսուս Քրիս-
տոսը անկեղծութեամբ կը սիրեն»:
Կը ջանամ իմ բոլոր յարաբերութիւննե-
րուս մէջ այս ոգին ցուցնել:

«Աստուծոյ արքայութիւնը կերա-
կուր ու խմելիք չէ, հապա արդարու-
թիւն և խաղաղութիւն ու խնդութիւն
Հոգւով Սրբով» Ահա այսպէս կ'ըմբռ-
նեմ Աստուծոյ Թագաւորութիւնը: Ես
կը հաւատամ որ Քրիստոս եկաւ այս ար-
դարութեան, խաղաղութեան և խնդու-
թեան Թագաւորութիւնը հաստատելու,
և որուն ես ալ կ'ուզեմ ծառայել: Քը-
րիստոսի խաչին կը նայիմ, և անոր մէջ
յայտնուած այդ յաւիտեանական և աստ-
ուածային սկզբունքը, այսինքն թըշ-
նամին օրհնելու և չարիքը անձնազոհ
սիրով փոխադարձելու սկզբունքը կը

տեսնեմ, և զայն աշխարհի փրկութեան
ճշմարիտ միջոցը կ'ընդունիմ: Եւ ես ալ
կը ջանամ այդ սէրը աւետարանել և
արտայայտել: Փափաքս այն է որ մար-
դիկ խմբակցութեան անդամ չըլլան,
այլ Աստուծոյ Քրիստոսի մէջ եղած սէ-
րին մէջ մէկ ըլլան: Այս նպատակը ա-
մէն րանէ վեր կը դասեմ:

«Ասով գիտցանք Քրիստոսի սէրը որ
Ան իր կեանքը մեզի համար դրաւ»
«Աստուած աշխարհը այնպէս սիրեց»:
«Աստուած սէր է»:

Աթէնք, Նոյ. 22, 931

ԾՆՈՒՆԴԷՆ ՎԵՐՋԸ

Գրեց՝ ՎԵՐ. Կ. Յ. ՍԹԱՄՊՈԼԼԵԱՆ

Քանի մը օրէն Ծնունդի գանգակնե-
րը զօղանջելէ պիտի դադարին: Հոյա-
կապ տաճարները լիցնող անսովոր
բազմութիւնները պիտի ցրուին: Աս-
տուծոյ սեղանները և ընտանեկան յար-
կերը լուսաւորող մոմերն ու կանթեղ-
ները պիտի մարին: Պերճախօս քա-
րոզներու և քաղձրահնչիւն երգեչոցու-
թեանց արձագանգները աշխարհի ժը-
խորին մէջ պիտի անհետանան:

Աստուած իր աչքերը պիտի դարձնէ
տուներու, խանութներու, փողոցնե-
րու, կեանքի սովորական ընթացքին,
աշխարհի փորձութեանց և նեղութեանց
մէջ նետուած մարդոց, հասկնալու հա-
մար թէ կատարուած տօնախմբութիւն-
ները և կրօնական հանդիսութիւննէլ
հոն ի՞նչ հետքեր թողուցած են: Պիտի
փափաքի տեսնել թէ քրիստոնեաներս
ո՞րքան նմանութիւն ունինք Անոր՝ որուն
անունովը երգեցինք, աղօթեցինք,
քարոզեցինք, և թերեւ հպարտացանք:
Պիտի ուզէ գիտնալ թէ Յիսուս ո՞րքան
զնահատուած, սիրուած, և հիւրընկալ-

ուած է մեր հոգիներուն մէջ: Թէ Ան ո՞ր
տոտիճան հաստատուած է մեր կեանքին
մէջ: Եւ թէ իր մեծ և օրհնեալ անունը
կրողներս երկար տարիներու ընթաց-
քին ո՞րքան մեծցած, աճած, ու գէպի
իր հոգեւոր ու բարոյական կատարելու-
թիւնը բարձրացած ենք:

Աստուծոյ աչքերուն առջեւ պիտի
պարզուին երկու տեսարաններ: Առնց-
մէ մէկուն մէջ պիտի տեսնէ քրիստոնե-
աներ, զիս Ծնունդի ջերմեռանդ հան-
դիսութիւններէն հազիւ թէ դուրս ե-
կած, որոնց կեանքը զոգոթթայական
խաւար մը կը պատէ: Հոն Քրիստոս
կը խաչուի: Ո՞րքան քրիստոնեաներ
կան որոնց Մտուրը՝ Գողգոթայէն բաժ-
նող միջոցը այդ աստիճան կարճ է...:
Ո՞վ գիտէ, թերեւս մեզմէ ոմանց
մտուրը՝ իսկականին մէջ Գողգոթայ մէ:
Ուր որ մեր եսը՝ ու է ձեռին տակ կը
նսեմացնէ Քրիստոսի փառքը, մեր յի-
տին նպատակները և ստորին շարժա-
ռիթները մղիչ ոյժը կը կազմեն մեր
կրօնական արարքին, մեր ճղճիմ հա-

չիւններուն զօհ կ'երթան Աստուծոյ Թա-
գաւորութեան պանծացումն ու տարա-
ծումը, հոն խաչելութիւն մը կայ՝ հոգ
չէ թէ մեր ոտքերը տաճարներու սեմին
վրայ դեգերին, ու մեր աչքերը Բեթլե-
հեմի աստղին սեւեռին:

Տիրոջ աչքերը երկրորդ տեսարա-
նին մէջ պիտի տեսնէ քրիստոնէականեր՝
որոնք շարժուն մտւորներ են: Անոնց
համար ամէն օր ծնունդ է: Անոնց
հոգւոյն մէջ Յիսուս ամէն օր նոր փայ-
լով մը, նոր գեղեցկութեամբ մը, նոր
փառքով մը կը յայտնուի: Անոնք շա-
րունակ կ'աճին: Աճումը՝ յարատեւ
նորութիւններու խանձարուն է: Ա-
նոնց կեանքին իւրաքանչիւր փորձու-
թիւնը, պարտութիւնը, և նուաճումը
միջոցներ են որոնց մէջէն Բրիստոս
նորանոր վայելչութիւններով կը յայտ-
նուի մարդկութեան: Անոնց շրթունք-
ներուն վրայ երկինքն է որ կը թըրթ-
ռայ: Անոնց աչքերուն մէջէն Աստու-
ծոյ սրբութիւնն է որ կ'արտացոլայ:
Անոնց լուսթեան, համբերութեան, զո-
հաբերութեան, և արցունքներու մէջ՝
մարդոց փրկութեան և աշխարհի իրա-
կան խաղաղութեան արշալոյսն է որ կը
խլրտի:

Ո՞ր միջոցը աւելի Ազդուօրէն կրնայ
ներկայացնել Բրիստոս քան այսպիսի
ճշմարիտ հաւատացեալները: Մշտա-
տատեւ կերպով աճող կեանքը՝ անհեր-
քելի փաստն է Բրիստոսի փրկարար
զօրութեան:

Ի՞նչ օրհնութիւն պիտի ըլլա՞ր այս-
պիսիներուն ներկայութիւնը ու է շըր-
ջանակի մէջ:

«Ներքին կեանքդ ի՞նչ բարձրութիւն
ունի, չեմ գիտեր, բայց սա գիտեմ որ
հիմա քեզի հետ ապրիլը աւելի դիւրին
է քան թէ առաջ», ըսաւ Թիկին մը իր
քրոջը զոր երկար տաքինելէ ի վեր ա-
ռաջին անգամ կը տեսնէր: Ուրիշ մէ-
կը սապէս աղօթեց. «Տէ՛ր, ուրիշնե-

րու հետ ապրիլս հաճոյալի դարձուր, և
ըստ այժմ պատրաստէ դիւս»: Մեր
շուրջը կը գտնուին մարդիկ որոնց
կեանքը գտնազան դառնութիւններով
լեցուն է: Այդ դառնութիւնները որ-
քան պիտի մեղմանային եթէ սոյն ա-
ղօթքը ընդհանրանար մեր կեանքին
մէջ:

Առօրինակ Յուսիքը երբ Հնդկաս-
տանի փողոցներէն կ'անցնէր ժողովուր-
դը կը բացագանչէր. «Ահա՛ Յիսուս
Բրիստոսի մարդը կերթայ»: Աշխարհ
տէրքան աւելի պիտի մօտենար Բրիս-
տոսի եթէ Ան իր հետեւորդներուն վրայ
մարմնացած իջնար տուն, փողոց, խա-
նութ և առօրեայ կեանքի հասարակ
ընթացքին մէջ — Սթէնլի՝ երբ Տէյ-
վիտ Լիւինկսթընը փնտռելու համար
Ափրիկէ գնաց քրիստոնեայ մը չէր:
Եւ երբ որ Լիւինկսթընը գտաւ ան իր
կրօնքին նկատմամբ Սթէնլիին բառ մը
իսկ չխօսեցաւ: Բայց հազիւ թէ քանի
մը օր անցած էր ան սկսաւ Լիւինկսթը-
նի Սր. Գիրքը կարդալ ու անոր Աս-
տուծոյն աղօթել: Այդ հրաշալի փո-
փոխութեան ազդակը Լիւինկսթընի
կեանքն էր: Աշխարհի մէջ ի՞նչ սքան-
չելի յեղաշրջումներ պիտի կատարուէ-
ին եթէ Բրիստոս՝ իր անունը կրողնե-
րուս կեանքին մէջէն ցոլացող աշխարհի
Լոյսը ըլլա՞ր:

Մեր ներքին կեանքին մէջ Քրիս-
տոսի հետ սերտ հաղորդութիւն, ղէպի
իր կատարելութիւնը յարատեւ աճում,
մարդոց հետ քաղցր ու բարեոք յարա-
բերութիւն, կեանքով և կենդանի օրի-
նակով Բրիստոսի քարոզութիւն և Աս-
տուծոյ Թագաւորութեան տարածում,
ահա մեր քրիստոնէութեան յատկա-
նիչերը և նպատակը: Երանի անոնց՝
որոնք այս դիրքին մէջ կը խոնարհին
Յիսուսի մօտերին առջեւ, և այդ կեր-
պով կ'ապրին Ծնունդէն վերջը:

Արեմի

ԲԷՄՁԻ ՄԷՔՏՈՆԱԼՏ

Դրեց՝ ՎԵՐ. Կ. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

Վերջին ժամանակները քաղաքական աշխարհի գլխաւոր թերթերը մասնաւոր կերպով զբաղեցան մարդկութեան ծանօթացնելու համար այս մեծ մարդը, որ այժմ երրորդ անգամ ըլլալով Բրիտանական կայսրութեան գործերը կը վարէ։ Այս անձնաւորութեան կեանքն ու նկարագիրը կարեւոր դասեր կը պարունակեն իր մէջ։ Կ'արժէ որ «Նոր Աւետարան» ընթերցողները անոր նըկատմամբ քիչ շատ տեղեկութիւն առնեն։

Նախ՝ Մարդն ինքը։ Սկզբնապէս միշտ որ երկայնահասակ, առողջ, ուղղահայեաց, ձեւաւոր, հաստատուն մարմին մ'ունի։ 64 տարեկան է, սակայն երբ կը քալէ իրմէ քսան տարի երիտասարդ եղողներու նախանձը կը շարժէ։ Աչքերը մեծ միաքիւս սրտի մը պատուհաններն են։ Երբ պտոյտի ելլէ գէմքէն յայտնի կ'ըլլայ թէ խորհուրդներով լեցուն է։ Նաեւ գիտէ հանգիստ և հոգերէ ազատ և խաղաղ ըլլալու արհեստը։ Ընկերներու և բարեկամներու մօտ հաւածատեն երիտասարդի մը պէս զըւարթ և կայտառ կ'ըլլայ։ Ունի երկու աղջիկ և մէկ մանչ զաւակներ։ Որդին հիմա փարլամենթի անդամ է։ Անոնց հետ տուն գտնուած ատեն ընտանիքին ուրախութիւնը կը տասնապատուի։ Մինչեւ այսօր քենիս և գնդակ կը խաղայ։ Նաւակի մէջ թի կը քաշէ, որսի կ'երթայ, քալելով լեռներն ի վեր կը մագլցի։

Մէքտոնալտ 1866ին Սկզբնապէս զիւղերէն մէկուն մէջ ծնած է։ Երկու դարէ ի վեր իր գերդաստանը անբերրի հողի վրայ երկրագործութեամբ ապրած է և ոչ մի ժամանակն իսկ ապէս նախանձիկ վիճակ մը չունեցան։ Բէմքին պա-

տանեկութեան հասակին մէջ գիւղին դպրոցը դրուեցաւ։ Շատ չարաճճի էր, դպրոցէն մինչեւ տուն՝ իր հանդիպած ոչ մէկ քար տեղը կը մնար։ Խեղճ թուչունները Բէմքին ձեռքով քայքայուած իրենց բոյներուն վրայ միշտ կ'ոգբային։ Սակայն անոր մտային կարողութիւնը եզակի էր։ Դեռ տառն երկու տարեկան հասակին՝ դասերը լաւ սորվելէն զատ, իր հօրը և գիւղին գրադարանին մէջ գտնուող բոլոր բանաստեղծութիւնները, վէպերը, պատմութիւնները կարդացած էր։ Անոր որչափ խելացի և սրամիտ ըլլալը առաջին անգամ իր մեծ մայրը նշմարած էր և արագ դարգացումին կը հիանար։ Նիւթական գլժուարութեան պատճառաւ իր ծնողքը զինքը դպրոցէն հանել և ազարակին մէջ գործածել կամ արհեստի մէջ դնել կը խորհէին, սակայն դպրոցին տեսուչին բուռն բողոքին շնորհիւ անոնք այս գաղափարէն վազ անցան, թե ունէ միջոց չէին տեսներ իրենց զաւակին գլժեմական կամ համալսարանական կըրթութիւն տալու։ Հետեւաբար, նա Պրիւթոլ գնաց մէկու մը քով գրագիր ըլլալու։

Այս պաշտօնը իրեն գոհացում չտուաւ։ Լոնտոն գնաց, շատ ազգատիկ մէկ թաղին մէջ խեղճուկ կեանք մը անցնելու հաւանեցաւ։ Յորեկը կ'աշխատէր, գիշերը դպրոց կ'երթար։ Ասոր ալ շատ չկրցաւ դիմանալ, տուն վերադարձաւ։ Բայց շատ չանցած պարագաները զինքը շնորհէն Լոնտոն բերին։ Հոն փարլամենթի ազատական կուսակցութեան ազգեցիկ անդամներէն մէկուն քով գրագիր եղաւ։ Հոս էր որ քաղաքական մարդ ըլլալու տենջանքը և երազները պիտի իրականանային։

Պատեհութիւնը օգտագործելու ժամանակը եկած էր: Այս պաշտօնին մէջ չորս տարի մնալով ժողովուրդին միջին դասակարգին մտայնութիւնը, վիճակը, անոնց հետ ապրելու, ծառայելու և օգնելու կերպը և միջոցները լաւ ուսումնասիրեց: Ֆապիան կոչուած ընկերութեան յարելով, պատեհութիւնը ունեցաւ Պէրնարտ Շոյի, պատմաբան Կ. Յ. Ուէլլի պէս նշանաւոր գիտնական և քաղաքագէտ մարդոց հետ շփում և յարաբերութիւն մշակելու: Ասոնք ընկերվարական և տղատական էին:

* *

Երկրորդ՝ Բեկի Մեֆսոնայ իբրեւ ֆալսֆալան նարդ:

Վերջապէս Բէմդի Մէքտոն ալտ աշխատաւորական կուսակցութեան միացաւ և անոր ճիւղերէն մէկուն առաջնորդը եղաւ: Շատ չանցած մեծահամբաւ գիտնական Լորտ Քէլվինի ազգականներէն Փրոֆ. Կլատսթոնի աղջկան հետ ամուսնացաւ և այս պարագան անոր համբաւը մեծցուց և դիրքը ամրացուց: Այս ամուսնութիւնը Մէքտոնալտի գործին ուրիշ տեսակէտով ալ շատ օգտակար եղաւ: Տիկ. Մէքտոնալտ քաղաքագէտի մը համար իտէալ ընկերուհի մ'էր: Նա դժուարութեանց ժամանակ իրեն ամուսինին կ'օգնէր, զայն քաջալերելու կերպերը լաւ գիտէր: Փոթորկալից ատենները նա խաղաղութեան նաւահանգիստ մըն էր: Անոր ծիծաղադէմ և քաղցր նայուածքն աւ խոսուածքը ճշմարտապէս միտքը և սիրտը կը խաղաղեցնէին: Նա իր ամուսինին և զաւակներուն աւրախութեան հրեշտակն էր:

Մէքտոնալտ 1901 ին Փարլամենթի ազգեցիկ մէկ անդամը եղաւ: Յորի համբերութեամբ աշխատելով Աշխատաւորական կուսակցութիւնը և քրեյս խոնիրները միացնելով հզօր ազատա-

կան փարթի մը կազմեց և տէրութեան զեկը ձեռք անցուց: Մէքտոնալտ թէև ընկերվարականներուն համարումներն ալ չահեցաւ, բայց՝ անոնց հակակրօն գաղափարներէն բնաւ չազդուեցաւ: Ինքը՝ բարեպաշտ, աւետարանական եկեղեցին սիրող, բարոյական դրութեան մը գոյութեան հաւատացող մըն է: Ընտանեկան, քաղաքական, ընկերային, անհատական իբր բարի ազդեցութեան ազրիւր կրօնքը կ'ընդունի: Անգլիական քաղաքականութեան ամենակարեւոր ազգական է ասիկա:

Մեծ պատերազմը եկաւ: 1914 Օգոս. Յին Սըր էտուարտ Կրէյ Գերմանիոյ վերջնագիր տուաւ և պատերազմին մէջ նետուեցաւ: Մէքտոնալտ պատերազմի մտնելու հակառակեցաւ: Որոշ տեսաւ թէ այս պատերազմը երկրի միջին դասակարգին և ընդհանուր ժողովուրդին փճացումը պիտի ըլլայ: Այն կը խորհրդ և համոզուած էր թէ անձնական նկատումներ և շահամոլութիւններ այս աւերիչ կրակը բռնկեցուցին: Անհատական թշնամութիւններ կային անոր ետեւը: Այս մասին Մէքտոնալտի Փարլամենթի մէջ ըրած բանախօսութիւնը քանիցս ընդհատուեցաւ: Սակայն նա ըսել ուզածը վերջապէս ըսաւ: Ինքը և ամէն մարդ այնպէս նկատեցին թէ այս հակապատերազմեան ճառին պատճառաւ իր քաղաքական կեանքը վերջացած է, թէ տարիներով թափուած աշխատանքը ապարդիւն պիտի մնայ և իր փարթին բաժանումի պիտի ենթարկուի: Սակայն նա այս խորհուրդներէն չ'ազդուեցաւ: Որոշած էր թէ, եթէ իրեն անձնական շահին տեսակէտով ամէն ինչ կորսուի ալ, ինքը իրեն համոզումներուն մէջ անդդուելի պիտի մնայ: Նոյն ատեն ամէն տեղ և պարագայի մէջ նա որոշապէս կ'ըսէր թէ, եթէ հայրենիքին իրական շահը կը պահանջէ, եթէ իրօք հայրենիքը մեծ

վտանգէ մը փրկելու համար պատերազմիւ պէտք է, իր անձը և կուսակցութեան շահը զայն յաջողցնելու համար զոհելու պատրաստ է։ Սակայն ազգը հայրենասիրութիւնը և ստորին շարժառիթները իրարմէ զանազանելու վիճակի մէջ չէր։ Մինչև իսկ իր աշխատաւորականները զինքը լքեցին և Մ. Հէնտըրընը իրենց պետը ընդունեցին։ Պատերազմին ամբողջ ընթացքին խօսքով և բանակցութիւնով խաղաղութեան համար աշխատեցաւ։ Բանախօսութիւններ ըրաւ և այս բանախօսութեանց մէջ շատ սխալներ գործեց։ Պատերազմի ջատագովներէն արտաքին գործոց,

ծովային և պատերազմական նախարարներուն և ուրիշ կարեւոր անձերու սիրտերը վիրաւորեց։ Շատ անգամ ըրած բանախօսութիւնները ազմուկներով ընդհատուեցան։ Սակայն ամէն մարդ կատարելապէս համոզուած էր թէ Մէք-տոնալտ անկեղծ էր և իր համոզումները կը քննարկէր, թէ նա անձնական զձուձ շարժառիթներէ բխրոյթիւն ազատ, յստակ ջաւրի պէս պարզ և իր հայրենասիրական գաղափարներուն մէջ անյոգ-գող է։ Ինչ որ կ'ըսէր և կ'ընէր պարտաճանաչումի մասք կ'ընէր և կ'ըսէր։

(Շարունակելի)

ՆՈՐ «ԱՒԵՏԱՐԵՐ»Ը ԵՒ ՄԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գրեց՝ ՓՐՈՅ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

Տէր Խմբագիր,

Փափաքած էիք որ «Նոր Աւետարներ» ի մասին բան մը գրեմ, և կարգ մը յանձնարարութիւններ ընեմ։ Չկրցայ մերժել։ Բայց ինչէն ճառեմ։

«Նոր Աւետարներ» ի ծառայութիւնը, զոր նա կատարած է և տակաւին կը կատարէ, ամէնուէն յայտնի է։ Անիկա Տր. ձ. Մէրիլի ջանքերուն շնորհիւ 1927, Նոյեմբերին գոյութիւն առած է՝ այս երկրին մէջ աւետարանական ժողովուրդին մէկ մեծ պէտքը գոհացնելու նպատակով, և ձեր ջանքերուն շնորհիւ ալ՝ հակառակ միջոցներու արտասովոր կերպով սահմանափակ ըլլալուն՝ օրէ օր մեծնալով և կատարելագործուելով կարեւոր ծառայութիւն մը մատուցած է։ Ասիկայ շնորհաւորութեան արժանի է։

Մեր կարծիքով անոր գոյութեան շարունակումը անհրաժեշտ է։ Այս դարուն մէջ մամուլէ զուրկ ժողովուրդ մը կամ ձեռնարկ մը վերջապէս կործանելու

դատապարտուած է։ Աւետարանական եկեղեցիները այս երկրի բնակիչներուն տալիք պատգամ մ'ունին, որուն համար ամէնէն ազդու միջոցներէն մէկն է մամուլն ու հրապարակագրութիւնը։ Ասիկայ երբեք չմոռնանք։

Գալով յանձնարարութիւններուն՝ ըսելիք նոր բան մը չունիմ։ Իմ յիշելիք կարգ մը կէտերը արդէն ձեզի ծանօթ են. այս գրութիւնովս զանոնք շեշտած պիտի ըլլամ։

1. «Նոր Աւետարներ»ի նման թերթ մը պէտք է ժողովուրդին առաջնորդ մը ըլլայ։ Իրարմէ տարբեր գաղափարներուն արձագանգը ըլլալով հանդիմանիկայ պէտք է իրեն յատուկ կարծիքը, գաղափարը, սկզբունքը ունենայ։ Անիկայ պէտք է որոշ նպատակաւէտ եւ որոշ քաղաքականութիւն ունենայ։ Հանրային կարծիքին միայն թաղմանը չէ, այլ յաճախ անոր ազդեցոյցը պէտք է

ըլլայ: Եւ պէտք եղած ատեն յարմար կերպով բայց քաջօրէն պէտք է իր կարծիքը արտայայտէ: Անիկայ պէտք է ժողովուրդին ոչ թէ ետեւէն այլ առջեւէն հրթայ: Խմբագրին անձնական համոզումներն ու սկզբունքները պէտք է թերթին անտեսանելի բայց տիրող հոգին ըլլայ:

2. Այսպիսի թերթ մը գաղափարի ազատութիւնը յարգելով հանդերձ՝ կարելի եղածին չափ պէտք է ուշանայ անօգուտ կամ անձնականութեամբ ըզրադող վիճաբանութիւններու ասպարէզ ըլլալէ: Իրենց բնութեան բերումով աններելի վիճաբանութիւնները չափազանցութեան տանելու կամ անձնականի վերածելու փորձութիւնը և վտանգը շատ մեծ է այս երկրին մէջ: Թերթը միշտ պէտք է աչալուրջ գտնուի այս վտանգին հանդէպ:

3. Այսպիսի թերթ մը պէտք է իր ընթերցողները տեղեակ պահէ աշխարհիս մէջ տեղի ունեցող կարեւորագոյն դէպքերու մասին: Ասիկայ երբեք դիւրին գործ մը չէ: Թերթը ռօրը յիշէ քաղաքական, անտեսական, ընկերային, ճարտարարտեսական, գիտական և կրօնական հարցերէն, որոնք այնքան բազմաթիւ են: Խմբագիրը մասնաւոր ջանք պէտք է թափէ ասոնց մէջէն ամէնէն կարեւորները ընտրելու և ամփոփ կերպով զանոնք ներկայացնելու համար:

4. «Նոր Աւետարեւր» էն մեր ուրիշ մէկ կարեւոր ակնկալութիւնն արսա է թէ կրօնական շարժումներու, գործունէութեանց և դէպքերու և գաղափարային հոսանքներու մասին մեզ աւելի տեղեակ պահէ, թէ ան մեզի համար բաշխոյի պաշտօնը կատարէ, գաղափարներու միջնորդարին մէջ թափառող ձայներու մեզ հաղորդ պահէ: Սուրբոյ այս մէկ անկիւնը ապրիլի քաղեակ ըլլալով համաշխարհային գաղափարներու և դէպքե-

րու, իբր ի. դարու և ոչ իբր ժԸ. կամ ժԹ. դարու մարդը:

5. Իբր Հայ մենք աւելի կ'աւելնք գիտնալ մեր ազգային կեանքին և դէպքերուն մասին: Շատ լաւ կ'ըլլայ եթէ «Նոր Աւետարեւր» աւելի հոգ տանի այս մասին:

6. Մենք մասնաւոր պէտքն ունինք աւելի տեղեկութեան և առաջնորդութեան մեր մէջը բնական երկրին, անոր ժողովուրդին, կառավարութեան, արքայական, քաղաքական և կրօնական կեանքի պայմաններուն մասին: Մինչեւ հիմա այս բաներու մասին քիչ բան կարգացինք «Նոր Աւետարեւր»ի մէջ. պէտք չէ՞ որ ասոնց մասին աւելի լրտենք, աւելի գիտնանք:

Ահա ասոնք են մեր միտքը եկող կարգ մը թեւագրութիւնները, զորոնք ըսել շատ շատ աւելի դիւրին է քան ընելը: Խմբագիրը ասոնցմէ ռօրուն հասնի, իր օգնականի և դրամի տեսակէտէ այնքան սահմանափակ և թերի միջոցներով ասոնք ի՞նչպէս կարենայ կատարել: Եթէ չի կրնար կատարելապէս կատարել գոնէ կրնայ զայն իրեն նշանակէտ ընել և ըստ այնմ աշխատիլ:

Միւս կողմէն Սուրբոյ մեր Հայ Աւետարեւր կեդեցիներն ու հասարակութիւնն ալ «Նոր Աւետարեւր»ի համար կարեւոր ընելիքներ ունին: Մինչեւ հիմա՝ մեր կատարելիքէն շատ պակաս բան ըրինք: Մենք պէտք ենք ամէն կերպով քաջալերել գայն, պէտք ենք մեզի համար կարելի ամէն գոհողութիւն յանձն առնել՝ զայն կատարելապէս ինքնապահ դարձնելու համար: Եթէ կտրելի է ամէն ընտանիք պէտք է բաժանորդագրուի անոր: Մեր կարող գրիչներն ալ՝ մինչեւ հիմա իրենց ըրածէն աւելի պէտք են այս թերթը քաջալերել իրենց յօգուածներովը:

ԿԻԼԻԿԻԱ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Գրեց՝ ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

Պատմահայր Հերոդոտոսը կ'ըսէ թէ Կիլիկիոյ նախապէս Հիւպսիսաններ կը կոչուէին, և իրենց անունը ստացան Ագենովրի որդի Կիլիս անուն փրահիկացիէ մը (VII. 91): Ասիկա հին Յայնեցի սովորական ոճով հնարք մըն է, որոնք անպատճառ ամէն երկրի և ժողովուրդի անուանադիր հերոս մը երեւակայելու ստիպուած էին:

Կիլիկիա երկրանունը բնականաբար ծագում կ'առնէ Կիլիկ անուանեալ ցեղէ մը, ինչպէս որ Արաբիա երկրանունը շինուած է Արաբ ժողովուրդին անունէն: Միայն թէ հիմա այլեւս բազում դարերէ ի վեր գոյութեանէ դադարած է այդ Կիլիկ ցեղը որ իր անունը ժառանգութիւն թողեր է Կիլիկիոյ: Ե՞րբ ապրած է այդ ժողովուրդը, ուսկի՞ց և ո՞ր թուականին եկեր է յիշեալ երկիրը և անոր փոխանցած՝ իր անունը. ասոնք հարցեր են որոնց պատասխանել զժախտաբար շատ գժուար է եթէ ոչ անկարելի:

Հոմերոս իր հռչակաւոր Իլիականին մէջ կը յիշէ Կիլիկներ ալ իբրեւ անմիջական դրացի Տրովադա կամ Իլիոն քաղաքին, և բնական՝ Միտիլի կղզիին զիմացը, Ադրամիւնտայի ծոցին եկերթը: Անոնք հոն երկու իշխանութեանց բաժնուած կը կառավարուէին, մէկուն կիլլրոնն ըլլալով Թեքէ՝ Պուկոս լեռան վրայ, Ադրամիւնտա քաղաքէն 60 ասպարէզ դէպի հիւսիս, իսկ մէկաւրինը՝ նոյն քաղաքէն 80 ասպարէզ դէպի հարաւ՝ Լիւռնեսոս, Եւեհոս գետակին ափանց վրայ, որմէ կ'առնէին իրենց ջուրը Ադրամիւնտայից ալ (Հմտ. Strabo, Geogr. pp. 612, 614. Pliny, Nat. Hist. 5. 32): Քերթոզահայր սակէ զատ կը յիշէ Կիլիկեանց բն-

դարձակ գաղութ մը Մեծ Փոլիգիոյ մէջ, որոնք բոլորը Տրովադայի նշանաւոր պատերազմին ժամանակ (Ն. Ք. 1178—1168) Իլիոնի զինակիցներն էին Յունաց գէմ: Կալլիսթենէս կ'աւանդէր որ այդ պատերազմին վախճանէն յետոյ Տրովադայի դրացի Կիլիկները նաւերով արտագաղթած և Պամփիլիոյ եզերքին վրայ ուրիշ Լիւռնեսոս մը հիմնած են Փասելիս և Ատտալիա քաղաքներուն մէջտեղ (Strabo, Geogr. p. 667):

Արդի գիտունները չեն տարակուսիր այս տեղեկութեանց ստուգութեանը, միայն համաձայն չեն սա կէտին վրայ թէ արդեօք Տրովադայի դրացիները բուն Կիլիկիայէն գաղթականներ չլին, թէ պատմական Կիլիկիցիք Դարդանէլի կողմերէն գաղթեր եկեր են: Քանզի Հատեանց (Խեոացուց) Մուտալլու թագաւորին և Եգիպտոսի Ռամսէս Բ. մեծ փարաւոնին միջև պատահած պատերազմին, մանաւանդ Կադէսի նշանաւոր ճակատամարտին առթիւ (Ն. Ք. 1342), Եգիպտացի ժամանակագիրները իբրեւ Հատեանց զինակիցներ կը յիշեն ուրիշ Դարդանեան ցեղերու հետ նաև Կիլիկները (տես Garstang, The Hittite Empire, p. 172): Եւ տարակոյս չկայ թէ Տրովադացիք և իրենց դրացի զինակիցները Յունաց կողմէն յաղթահարուելէն ետքը, ինչպէս բոլոր հին աւանդութիւնները կը վկայեն, իրենց տեղերը Յունաց ձգելով, արտագաղթած և նորանոր պաղութներ հիմնած են Փոքր Ասիոյ հարաւային եզերաց վրայ, Կաբիա, Լիւկիա, Պամփիլիա, և ինչ: Սակայն չենք կարծեր որ պատմական Կիլիկիոյ մեծ և ներքսմաքային ժողովուրդը վերոյիշեալ երկու ծովեզերեայ

փոքր իշխանութեանց սերունդ հղած ըլլայ: Մանաւանդ, ինչպէս վարօք պիտի տեսնենք, Տրովադայի պատերազմէն դարերով առաջ Կիլիկիոյ կը հանդիպինք բուն Կիլիկիոյ մէջ: Նախապատմական ցեղերու գաղթումներու մասին նորագոյն հետազոտութիւնները մեզ կ'առաջնորդեն սա համոզման թէ Կիլիկիոյ ցեղը արդարեւ Կիլիկիոյ ընդոծին ժողովուրդը չէր, այլ ամբողջութեամբ հիւսիս արեւելքէն կամ թերեւ աւելի հաւանօրէն հիւսիս-արեւմուտքէն գաղթեր եկեր է, և թէ Տրովադայի մօտ կամ Փոլիսիոյ մէջ հաստատուած Կիլիկիներն ալ ընդհանուր մարմինէն անջատուած փոքր հատուածներ էին, որ խորք մնացեր էին Եգէականի ափերը կամ Փոքր Ասիոյ կեդրոնական ատփառանը: Իսկ Կիլիկիանց մեծ մասը մինչ կ'երբեւի թէ արդէն Ն. Ք. 1600 թուականէն առաջ հոծ բազմութեամբ հաստատուած էր Անտիտաւրոսի արեւմտեան զառթափը, Ալիւս գետի հարաւային աղեղէն մինչեւ Կալիկադոնոսի վերին ջուրերը: Անոնք այս տեղերէն հետզհետէ թափանցած են դէպի հարաւ արեւելք լեռնաշղթաներուն ձորերը և ապա տարածուած մինչեւ Միջերկրականի ծովերը:

Երեք գլխաւոր բնական բաժանումներ աւելի Կիլիկիա. (ա) Արեւմտեան լեռնային մասը, զոր դասականք Ապառաժուս Կիլիկիա կ'անուանէին. (բ) Հիւսիսային լեռնային մասը կամ Անտիտաւրոսի կամ միջին Տաւրոսի երկերէն որ ամէն ժամանակ նկատուած է իբրեւ Բռն Կիլիկիա. այս մասը շատ հին ատեններ կ'երկարէր մինչեւ Արգեստ լեռնէն ալ հիւսիս, որով Կապադովկիոյ թագաւորութեան կիզրոնակա՞ն գաւառը, ուր կը գտնուէր Կեսարիա—Մաթաք, Կիլիկիա կը կոչուէր. (գ) Դաշային Կիլիկիա՝ Տարսոնէն մինչեւ Ամանոս լեռնաշղթան, Նշանաւոր Եգիպտոս

տարան Վիլհելմ Մաքս—Միւլէր իր ԱՍԻԱ ԵՒ ԵՒՐՈՊԱ՝ ըստ հին Եգիպտական մեհենագրութեանց » անուն հոյակապ գործին մէջ մեզի կը հաղորդէ ամենահին վաւերական տեղեկութիւններ Կիլիկիոյ մասին: Արդարեւ կ'ըսէ թէ հին Եգիպտացիք շատ որոշ գաղափար չ'ունէին մինչեւ անգամ զաշտային Կիլիկիոյ մասին, որովհետեւ իրենց ամենամեծ աշխարհակալը Թոդմէս Գ. անգամ Ամանոսէն արեւմուտք տաք կ'ուսած չէ, թէեւ իր ՅՏերորդ տարին (Ն. Ք. 1466) կը յիշէ դեսպաններ որոնք «Ծովուն վրայ եղող Կեյսկէ երկրէն» ընծաներ բերին իրեն: Ասիկա առաջին պատմական յիշատակութիւնն է Կիլիկիոյ: Բնականաբար Ապառաժուս եւ Լեռնային Կիլիկիաներ բոլորովին անմատչելի էին Եգիպտացոյց: Սովորաբար լոկ աւելարկան էր Գաշտային Կիլիկիոյ հետ ալ իրենց յարաբերութիւնը:

Մաքս—Միւլէր կը խորհի թէ Եգիպտական հնագոյն արձանագրութիւններուն մէջ շատ յիշուող Կեֆոյ անունը, զոր ինք շին Կտակարանի Կախրոտ անունին հետ կը նոյնացնէ, զաշտային կամ ծովեղերեայ Կիլիկիոյ ամենահին անուանն է: Բայց Կափթօք երկիրը, որմէ ծագում առած կ'աւանդուին Նաե Պաղեսոսի Փղշտացիները, աւելի հաւանականութեամբ Կրիտէ կղզին է. թէ միւս կողմէ, տարակոյս չկայ թէ Կեֆոյ Եգիպտական անունը կը նշանակէր Խոսէ մինչեւ Հոսոսի գիմացը Փոքր Ասիոյ ամբողջ հարաւային եզերքը, որուն ամենահին բնակչութիւնն ալ Կրիտացոյց հետ միեւնոյն վաղեմի ցեղին կը պատկանէր և Միկովեան կոչուած միւսնոյն նախապատմական քաղաքակրթութիւնն ունէր, ինչպէս մինչեւ հիմա պեղուած ամենահին խեցեղէններէն որոշ կը հետեւի: Մաքս—Միւլէր կը պնդէ ոչ Կափթօք և Կրիտոսի հին բնա-

կիւնները միևնոյն ցեղէն էին ու միևնոյն քաղաքակրթութեամբ տոգորուած։ Ասի կրնայ ուղիղ ըլլալ հին Կրետական ցեղէն Կեֆտոյներուն համար։ Բայց Կիւլիկները, որ ետքէն եկան եւ մեր երկրին իր միայնուն պատմական անունը տուին, երբեք Կիպրոս անցած ըլլալ չեն թուիր։ Եւ արդէն Կիւլիկներէն աւելն ժամանակ երկրին լեռնային մասերը նախասիրած են, և դաշտային Կիւլիկիոյ մէջ ժողովուրդին փոքրամասնութիւնը կը կազմեն, — իշխող դասակարգ մը միայն։

Եգիպտական արձանագրութեանց մէջ ուրիշ անուն մըն ալ կայ։ Որ ամենայն հաւանականութեամբ դաշտային Կիւլիկան կը նշանակէ, այսինքն՝ Կոսի երկիրը։ Արդ, ինչպէս Ասորեստանցւոց արձանագրութեանց մէջ Խիլսկու անունը (որ Եգիպտ. Կեֆիկ անուան կը համապատասխանէ,) կը ցուցնէ Լեռնային Կիւլիկան, նոյնպէս ալ միևնոյն արձանագրութեանց Կուէսնունը (որ Եգիպտ. Կոսէ անուան կը համապատասխանէ,) Դաշտային Կիւլիկան կը ցուցնէ։ Լեզուաբանական յաճախադէպ ու յայտնի երևոյթ մըն է երկու ձայնաւորներու մէջուէր տառամիտական կորուստը։

Ասկից արդէն դիւրաւ կը հետեւի թէ Կոսէ երկիրը կը համապատասխանէր դաշտային Կիւլիկիոյ։ Կոսէ երկրի զէպի Եգիպտոս արածութեանց մաս կը կազմէին փայտէ ձողեր, սայլակի առաջքի մասեր և այլն առաղծնիր։ «Կոսէի գաղտնաբեր» Եգիպտոս ահագին դեր կը խաղար։ Առած մ'ունէին որ կ'ըսէր. «Մարաութիւն մը դոր Կոսէի գարեջուրը միայն կրնայ մարել»։ Ասի բառական է ցուցնելու թէ Կոսէ իր այս արտադրութիւնովը որչափ հռչակաւոր էր և թէ պարզապէս իբրեւ «գարեջուրի երկիր» կը նկատուէր, կամ թէ ըսենք՝ հին Արեւելքի Պաւլիքոնէն էր։ Հիւսիսային երկրի այս բերքը, կ'ըսէ Մաքս-

Միւլլեր, չէր կրնար ներդաժաւելին արտադրութիւն մ'ըլլալ, որովհետեւ ցամաքային փոխադրութեան չի դիմանար գարեջուրը և միմիայն ծովով կարելի էր զայն Եգիպտոս փոխադրել։ Սակեւատ, Իսսոսի Մոցն արեւելքէն շրջապատող լեռնաշղթան, ուր տակաւին այսօր ինքնաբոյս է գայլաղը, բնիկ հայրենիքն ըլլալ կը թուի այդ կարեւոր պատատուկ բոյսին, որ գարեջուրին կուտայ իր յատկանշական համբ և թեթեւօրէն զգլխիչ զօրութիւնը։ Եւ վերջապէս, երբ ուղղակի Եգիպտոսի արքունի գարեջրոյ գործարաններուն մէջ «թագաւորին համար Կոսէի գարեջուր» պիտի պատրաստուի, զայս պատրաստող գերիները աչ թէ Ասորիացիներ են, այլ Կիւլիկեցիներ։ (W. Max Müller, *Asien U. Europa* p. 246-7)

Եգիպտացիք Կիւլիկիայէն կը գնէին յաճախ գերիներ ու գերուհիներ ալ, որոնք զոտ կովկասեան արիւնէ ըլլալ թուին, որովհետեւ շատ յարգի էին և բաց առաջ իբրեւ «կարմրագոյն» (այսինքն՝ խաբահաչ, blonde) կը նկարագրուին։ Հին Եգիպտացիք վերցոյցեալ արտադրութիւններէն զատ, Կիւլիկիայէն կ'ընդունէին արծաթ և կապար ըստուգապէս, թերեւ նաեւ պղինձ և երկաթ։ Հնութեան մէջ Կիւլիկիոյ մէկ ուրիշ հռչակեալ արտադրութիւնն էր սեւ վրանները, զորս բնիկները կը հիւսէին Տաւրոսի և Ամանոսի քարձուռններուն վրայ արածուող այծերու մաշկերէն, և զորս Յոյները, անուշառանայ գործածութիւնն առաջին անգամ Կիւլիկիայէն սորված ըլլալուն, Կիլիկիայէն անուանուէին։ Պօղոս Առաքեալ, որու ծննդավայրն էր Կիւլիկիոյ Տարսոն քաղաքը մանկութենէ սորված էր վրանագործութեան արհեստը։

(Շարունակելի)

Գրեց՝ ՓՐՈՖ. Յ. Թ. ԴԱՅԱՆՅԱՆ

«Նոր Աւետարեք»-ի Պատ. Խմբագրութեան բաղձանքին ընդառաջ երթալով՝ կուգանք այսօր իր ընթերցողներուն, այլ մանաւանդ ծնողներու և կրթական մշակներուն, ուշադրութեան յանձնել կարգ մը թուլցիկ տեսութիւններ, ու թելադրութիւններ կրթական հարցին շուրջ:

Հարցը, ըստ ինքեան գերազանցօրէն փափուկ, իր ծովածաւալ տարողութեամբ ինքզինքը կը հարկադրէ մեր կեանքի բոլոր պայմաններուն: Եւ ա՛յս իսկ պատճառաւ համայնքներ, ազգեր, կառավարութիւններ, ծանրածանր պահուածքներու առջեւ չեն ընկրկիր՝ բանաւոր կրթութիւն մը ապահովելու համար նոր սերունդին:

Կրթութեան նպատակի մասին տակաւին տիրող խարխուղումը եթէ վերջացած ըլլար՝ մերոսի նկատմամբ տիրող անհուն տարակարծութիւնները թերեւ աւելի հեշտութեամբ խոհական համաձայնութեան մը յանգած ըլլային:

Կան խանդավառներ, — որոնց թիւը բանակ կը կազմէ, — որոնք կրթութեան միջոցաւ հրաշքներ կը խոստանան մեզի: Ասոնց գէտ կան թերահաւատներ, — օրինակ՝ Շոբենհաուեր, — որոնք կըրթութիւնը «չպար» կը զաւանին:

Առաջին տեսարանները կրթութեան կը վերագրեն դրական դեր մը, իսկ երկրորդ կարգիները անոր կ'ընծայեն յաւէտ ժխտական դեր մը: Առաջինները կը պնդեն թէ՛ իրենք կրնան տըղուն մէջ յառաջացնել խել մը առաքինութիւններ: Վերջիները կը փաստարկեն թէ՛ այդ առաքինութիւնները «չպարուաներ» են յաւէտ, և կեանքի պոչքարին մէջ դիւրաջնջելի: Պէտք է, կ'ըսեն ասոնք, տղուն օգնել որ մոլու-

թիւնները ատէ, և ահա ինքնաբերաբար երեւան կուգայ առաքինութեանց համար բաբախուն սէր մը:

Այս երկու հակառակ տեսակէտներուն չափազանցութեանը վրայ չի յամենալով՝ կարելի է կերպով մը հաշտեցնել զանոնք, ընդունելով թէ՛ կըրթական գործը օրքան քակելու՝ այնքան շինելու գործ մըն է:

Բայց ո՞վ է որ պիտի կրթուի:

— Մանուկը, անշուշտ:

Բայց ո՞վ է այդ մանուկը, և ի՞նչ տարրերէ միաւորուած:

Ահա այս առանձին շուրջն է որ կը դառնայ կրթական հարցը իր բովանդակ ծանրութեամբ:

Միամտութենէ աւելի խոշոր սխալ մըն է կարծել թէ՛ մանուկը պարզ արարած մըն է, կամազուրկ, կրաւորական, հլու զանգուտ մը, և ա՛յնքան նման խմորի՝ որուն իրենց ուզած ձեւը կրնան աւել ծնողներ և դաստիարակներ:

Կրթական գործին բանաւոր կերպով ձեռնարկել կարենալու համար պէտք է միանգամ ընդմիջտ հրաժեշտ տալ այս բարեպաշտիկ երազին, որ, իր անմիջական երեւոյթին տակ, այնքան ազնաւոր եղած է մարդկային ընկերութեան, նուիրելով անոր՝ իրենց բուն կոչումէն հեռացում, աղճատում, խանգարում մարդկային էակներ, իբր մշակուած և զարգացած տիպեր... — Անցողակի՛ այս սողնակը գրողը սրամիտ մեծ մայր մը ունէր, որ սովոր էր ըսել, «Մեր օրերուն կարգացողէն չի վախճողը յիմար մը պէտք է եղած ըլլայ»:

Դառնալով մեր հարցումին՝ մանուկը խիստ բաղադրեալ արարած մըն է. անոր խառնուրդին մէջ, կարմիր գիծի

մը պէս, մեր աչքին կը զարնէ՝ նախ՝ անոր անհասկանալիքները, բացարձակապէս անկախ միւս բազկացուցիչ տարրերէն. երկրորդ՝ ժառանգականութիւնը, որ կոչուած է երբեմն, առաջին տարրէն յետոյ, վճռական դեր մը խաղալ հնթակային բովանդակ կեանքին վրայ. երրորդ՝ մանուկին ապրելիք միջավայրը, որ, յաճախ հաստատուն յենարաններէ զուրկ, կատարեալ շուարումի կը մատնէ բարեմիտ ծնողները և կրթական մը շահները:

Մանուկին բազմաբարդ գոյացութեան վերոյիշեալ երեք աւագ գիծերն արդէն, ըստ ինքեան, աւելի քան բաւական են՝ զայն (մանուկը) ըստ կամս գործելի «ատաղձ» մը, կամ ըստ հաճոյս ձեւակերպելի «խմոր» մը նկատելու վարկածը հիմնայատակ քանդելու:

Այս բարդութիւնը աւելի շփոթեցուցիչ կը դառնայ երբ մէկ պահիկ յիշենք թէ՛ մանուկը միտքիւն մըն է նաեւ՝ մէկը միւսէն տարբեր, երբեմն նոյնիսկ իրարու ներհակ, երբեք աշխարհներու — փիլիզական, մտաւորական և հոգեկան:

Եւ այս բարեկոնական խառնուրդին առջեւ մեր գրեթէ դասական դարձած մանկավարժութիւնն է որ, տալօրինակ ինքնավստահութեամբ մը, թեւերը հանգրծած, կը խիզախէ «գործի ձեռնարկել», պարտադրելով նոր սերունդին ի՛ր նպատակներն ու մեթոտները, որոնց և՛ մէկին, և՛ միւսին կը պակսի դեռ փորձառական կեանքին վաւերացումը...

Պատկերը կատարեալ ընկուհամար՝ բարի եղէք պահ մը հրեւակայել մանուկը, զոր շղթայով մը իրեն քաշել կը ջանայ անոր անհատականութիւնը՝ մէկ կողմէն: Միւս կողմէն ժառանգականութիւնը, իրբե իրաւատէր, շղթայ մըն ալ ի՛նք գետեղելով մանուկին պարանոցին՝ զայն կը քաշէ ի՛ր կողմը: Եւ ահա երրորդ անկիւնէ մը իր զուլսը կը

ցցէ միջավայրը, և չուշանար նոր շղթայով մը մանուկը առաջնորդել տարբեր ուղղութեամբ: Եւ անդիէն վրայ կը հասնի մեր շեփորուած Մանկավարժութիւնը, և ան ալ, իր կարգին, իր «նւպատակներուն» ու «մեթոտներուն» շղթաները կ'անցնէ մանուկին թեւերուն, և հեռապառ ձիգեր կը թափէ մանուկը քաշել բերելու ի՛ր իշխանութեան տակ... Խեղճ մանուկ, արդարեւ խեղճ ու արդահատելի վիճակի մէջ:

Մանուկը շրջապատող վերոյիշեալ իրերամերժ ուժերը բնական է որ տեղի տային կրթութեան նպասակին չուրջ դանազան տարակարծութեանց, և ասոնք ալ, իրենց կարգին, տեղի տային կրթական մեթոտի շուրջ ստեղծուած այսօրուան թահուրոհին:

Մերինն իման նիւթապաշտ դարու մը մէջ, բնական է որ շահախնդրական ոգին կամ գիւրակեցութեան տենջը իր որոշ ազդեցութիւնը թողուր կրթութեան նպատակի ճշգումին՝ և, հետեւաբար, նաեւ ուսմանց ծրագրին ու կիրարկելի մեթոտին ընտրութեանը վրայ: Եւ այս խնդիրներով շահագրգռուողներ պահանջ կը դնեն որ իրենց Ձայնին նախապատուութիւն արուի: Մայրը կ'ուզէ որ իր որդին բժիշկ ըլլայ, որպէս վիշատ դրամ շահի: Հայրը կը փափաքի որ ան լեզուներ սորվի, փաստաբան ըլլայ: Կնքահայրը, գեղարուեստասէր մարդ, գերասան մը տեսնել կ'ուզէ իր սանին մէջ, ևն, ևն: Ո՛ւր հարցնողը թէ տղուն մէջ այդ ասպարէզներէն մէկին կամ միւսին համար ոեւէ ընդունակութիւն գոյութիւն ունի՛, և կամ ի՛նչ է տղուն բուն կոչումը:

Գրեթէ ամէն երկրի մէջ նախակրթարաններ, ամերիկեաններ՝ առաւելապէս, իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցած են «գործնական» բերունդ մը պատրաստելու վրայ, իբրեւ թէ կրթութեան գերագոյն նպատակն եղած ըլ-

արտայայտուելէ յետոյ՝ մենք գրեթէ աւելորդ կը համարենք խօսիլ նաև մեթոտի վրայ. նախ՝ անոր համար որ անիկայ խնդիրին արուեստական (technical) կողմն է, և նիւթ՝ առանձին ուսումնասիրութեան. երկրորդ՝ մենք մեթոտի ամենագորութեան հաստատող մը չենք. կ'արժէ գոյութիւն ունեցող մեթոտները գիտնալ, անոնց ընդհանուր դիմերով մեր փորձառութիւնը ճշխացնելու համար: Եթէ կրթական գործը խորապէս կը սիրես, և անձիդ օրինակով կ'ուզես օգնել տղուն որ անոր ըլլայ, արդէն գտած ես լաւագոյն մեթոտը. ըսել կ'ուզենք՝ գործին հանդէպ սէր, աղջմտութեամբ օժանդակուած, քեզի անայայման ցոյց պիտի տայ հետեւելի ուղին: Մանուկներու խառնուածքին, բնութեան և ընդունակութեան պէսպիսութիւնը միծաւ մասամբ անպէտ կը դարձնեն գրուած մեթոտները: Կրթութիւնը յաւէտ անհատ

կանութեան հետ գործ ունենալով՝ կը պահանջէ անհատական վերաբերում իւրաքանչիւր ենթակայի հանդէպ:

Վերջացնելու համար կ'ուզենք շեշտել՝ որ մեր նախակրթարանները պէտք է ազատագրել ստորին, փքուն նպատակներու լուծէն և օժտել զանոնք մարդագործ, մարդավայել գաղափարականներով: Եթէ Դիոգինէս և Ո. Ուիլսըն այսօր անդամ մըն ալ աշխարհ պային՝ արդեօք քանի՞ լապտիւր պիտի վառէին մէկ երկու մարդ գտնելու համար... Ուրեմն վերադարձ մը դէպի առողջ և մաքուր գաղափարապաշտութիւն: Միք կարծիքովը՝ այս օրուան մոլորած ու շուարած աշխարհին պակասածը ասկա է: Կ'արժէ, պէտք է՝ որ Տունը, Վարժարանը, Եկեղեցին և Մասուլը լքջօրէն համագործակցին արդի. նաեւ ընծայելու համար նոր սերունդին կրթութեան գործը:

Գահիրէ, Դեկտ. 1931.

ՄԻՆՈՒ ԶԵՄ

Գրեց՝ Եկեղեցին

Տարիները անցան անոնցմէ մէն մին:
Բան մը տանելով ինձմէ,
— Գեղ, ժպիտ, կորով
Դիրք, փառք ու համբաւ.
Մերկութիւն մը մարմնոյս շուրջ
Եւ պարապ մը հոգւոյս խոր:
Մինակութեան մը սարսուռը
Կը տիրէ մէջս յամբարար...
Ա՛լ կը հեռանան քովէս
Պատանիներ թարմատի
Եւ աղջիկներ ծիծաղկոտ,
Եւ լուսնի երբ խանդավառ օրերուս
Մափողջունով իմ գլուխս
Վարդէ պսակ դնէին:

Եւ անո՛նք ալ՝ որոնց որքան անգամներ
 Միայն բարիք ըրած եմ:
 Կ'զգամ . . . կը մեռնիմ
 Սարսափը բովանդակ
 Մինակութեան իմ ճամբուս
 Օ, մանաւանդ ընկերներ նախկին
 Երբ հեռուէն կ'անցնին
 Առանց տալու բարեւ մ'անգամ
 Աստուծոյն:

Բայց մինակ չեմ. թէև շատեր
 Ինձմէ հիմա, հեռու,
 Վաղը աչքեր երբ բանամ
 Տիեզերքին մէկ անծանօթ
 Խորշին մէջ
 Թօթափելով ծերութեանս
 Զառամութիւնն ու խորշում:
 Երբ ծաղկատի հասակ հագնիմ
 Յանկարծ նորէն իմ տարեկից
 Բարեկամներս ու ընկերներս
 Նոր կարօտով մը սրտակէզ
 Պիտի գրկեն զիս սրտապինդ,
 Ինչպէս որ կը պատահի
 Օտարութեան մէջ իբր նժդեհ
 Հայրենակիցներ իբար մոռցած
 Օր մը յանկարծ կը հանդիպին
 Դէմ առ դէմ և կը փարին
 Իրարու:

Մինակ չեմ ու այժմէն կ'զգամ
 Թէ մոռցուած շատերէն, այսօր,
 Ծեր օրերուս մէջ տխուր
 Վաղը նորէն հին օրերու
 Ծանօթներ

Պիտի պատմենք իրարու
 Յուշերն անուշ երէկին
 Իր փառքերովն ու խաչով:
 Ու մտածումը այս
 Աղբիւր մըն է ինձ համար
 Սփոփանքի քաղցր, խաղաղ
 Մահուան տխուր ժամերուս:

ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԸ

Գրեց՝ ՏՈՐԹ . Ա . ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

«Մարդու մեջի կարողութիւնը անսահման կարելիութեանց առջեւ կը մնայ:» Հեկէլ

Հիւժկէնհօքի մանրագիտային մարմիններու առաջին անգամ տեսած օրէն իսկ՝ Ռոպէրթ Հուքի հասարակ նիւթի և փոքրիկ միջատներու կազմը տեսնելէ այս կողմ՝ մանրագիտակը հսկայաքայլ յառաջդիմութիւններ ըրած է:

Ներպայի մէջ 300 տարի առաջ մըրցանակ չահող և գիտական աշխարհի ու հետազոտութեան ուժեղ գործիքը — այդ պարզ մեծցնող կորնթարդ ապակին — հիմա գործաւորներու և սափրիչներու դպրոցներուն մէջ նետուած է:

50-100 տրամագիծ մեծարկութիւնները (magnify) խիստ կարեւոր կը նշկատուէին այն ատենուան մանրագիտակներու համար: Նոյնիսկ այսօր 1000 տրամագիծով մեծցնող մանրագիտակային գործի համար փորձառու և ճարպիկ մարդոց պէտքը կայ: Առ հասարակ աշխատանոցներու գործունէութեան մէջ գտնուող 1600 անգամ մեծցնող մանրագիտակները այլևս իրենց վերջի սահմանին թեւակոխած կը նկատուէին: Բայց անդր — մանրագիտակային մեծարկութեամբ կարելի է հասնիլ 5000 տրամագծի: անտարակոյս ասոր մէջ պէտք է որ աչքի տեղ լուսանկարչական ստուերատուն և ապակի գործածութիւն և կարճ ակիքներով անդր — մանրագիտակային ճառագայթ գործածութիւն փոխան հասարակ աչքի տեսութեան:

Սան Տիակոյէ Տր. Ռոյլը Ռէյմոնտ Ռայֆ վերջերս տեղեկացուցած է գերագոյն — մանրագիտակի մը մասին, որ լուսն մէջ տեսողութեան ճիշտութիւնը և լուսաւորութեան կազմածին համար

ամբողջութեամբ գաւարզ (Quartz) կը գործածուի փոխան ապակիի: Բեւեռացած լոյս կը գործածուի — այսինքն խոսք կ'անցուի Բիւրեղներէ, կոտրելով բոլոր ճառագայթները, ի բաց առեալ անոնցմէ որոնք միայն մասնաւոր մէկ մակարդակի վրայ կը թրթռան՝ յառաջ բերելով 5000-17000 տրամագիծ մեծարկութիւն: Առելի կարեւորը այն է թէ կրնայ ուղղակի մարդուն աչքը գործածուիլ՝ փոխան լուսանկարչական մեքենայի: Տարակոյս չկայ որ Ռայֆ մանրագիտակը մեծ լուծումներու պիտի հանգի մանրէաբանութեան մէջ:

Առաջին փորձը կատարուած է աղետապի (Typhoid Fever) պատիւներուն (միքրոպներուն) վրայ որոնց ծայրը տեսնուած են խիստ մանր շարժուն մարմնիկներ: Հաւանական է ասիկայ պիտի ըլլայ պատիւին բուն կեանքին շարժուն կեդրոնը: քանզի ցարք բժշկութեան զարմանք տուած էր սա պարագան թէ, երբ յաճապակի մզակի (Porcelain filter) մէջէն կ'անցուէր այս մանրէն՝ տակաւին ան իր նախկին ձեւը կը պահէր: Տարդ գործածուած ամենազօրաւոր մանրագիտակները չէին կըրնար ցոյց տալ այս շարժուն մարմնիկները, իսկ Ռայֆի մանրագիտակը որոշ կերպով ցոյց կուտայ զանոնք: Այս շարժուն մարմնիկները ձուածեւ արագ շարժող մասեր են պերոզակկապոյտ գոյնով: Աղետապի պատիւներուն՝ զտիչներու մէջէն թափանցումը չուարեցուցած էր բժշկական աշխարհը:

Ուշագրաւ ուրիշ մէկ փորձ ալ տեղի

ուենեցաւ: Պատիւներու զտելի և ոչ-
զտելի ձեւերը վանազանուեցան: «K.
միջատար նիւթ» ին (K. Medium) մէջ՝
առաջին 18 ժամուան միջոցին զարգա-
ցած պատիւները զտելի են, իսկ նպակաս
ժամանակուան միջոցին եղողները խո-
շոր և ոչ-զտելիներ են:

Այս նոր գիւտով անտեսանելի ճա-
կատին վրայ յարձակումը՝ գիտութեան
առջեւ յաջողութեան նոր դռներ պիտի
բանայ: Մարդուս վերջերս հնարած
արուեստական նոր աչքը պիտի սկսի
լուծել կրկնակ առեղծաւածը: Արուես-
տական այս աչքը կը բաղկանայ շար-
ժապատկեր մեքենայի և մանրադիտա-
կի միացումէ, որով կարելի պիտի ըլ-
լայ տեսնել «մահուան հծծիւնի» գոր-
ծադրութիւնը՝ ապրող փոքրագոյն նիւ-
թերու վրայ: «Մահուան հծծիւնը» կեղծ
անուան է այն սաստիկ և անլսելի ա-
լիքներու ձայնին որ յարձակելով կը
մեռցնէ ապրող բնիշները: Այս ալիք-
ները կ'արտադրուին՝ մասնաւոր կտրու-
ած գաւարի բւերեղները կիրարկե-
լով ելեկտրականութեան չափազանց ա-
րագութեամբ ծածանումներուն:

Կենդանի բնիշներու վրայ այս ալիք-
ներուն մահացու ըլլալը դիպումածաւ
գտաւ ֆրոֆ. Բ. Վ. Վոլտ, պատերազ-
մի միջոցին ընդծովեաներու վրայ փոր-
ձեր կատարած միջոցին: Այս ալիքնե-
րը մահացու են նոյն իսկ շերեփիկի եւ
փոքրիկ ձուկերու:

Անտեսանելիներու առջեւ սկսպտիկ
չդառնանք, եթէ մարդս անտեսանելի
ճշմարտութիւնները տեսնելու համար
ուրիշ արուեստական նոր աչքեր հնարէ,
ո՞վ գիտէ ճշմարտութիւններու ի՞նչ նոր
պատկերներ պիտի բացուին մեր առ-
ջեւը:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Պարսկաստանի մէջ գերեզմանատուն
մը գտնուեցաւ ի շատ մը դամբանե-
րով, որոնց մէջ անձանօթ ցեղի մը մը-
նացորդները գտնուած են: Հաւանա-
կան կը թուի որ այս ցեղը 4000 տա-
րիներ առաջ ապրած է: Կիւնիւրու,
մարդոց, մանուկներու և պատերազ-
միկներու մարմիններ գտնուեցան՝ ամ-
փոփուած թանկագին առարկաներով
միասին: Այս առարկաներէն կ'եզրա-
կացուի թէ՛ այս ցեղը տարբեր մշակոյթ
մը ունեցած է քան իւր ժամանակակից
ազգերը: Տակաւին ճշդուած է թէ որ
ցեղին կը պատկանին:

Կիպրոսի քարայրներուն մէջ գտ-
նուած գետածիններու և փրդերու մընա-
ցորդներէն կը կարծուի թէ՛ ժամանա-
կին այս կղզին ցամաքին միացած էր:

Մանրակրկիտ հետազոտութիւններ
կատարելէ ետքը գտնուեցաւ որ մեղ-
ներ կրնան օդանաւին վրայ հեծնել
և մէկ երկրէն ուրիշ երկիր փոխադ-
րուիլ: Մ. Նահանգաց մէջ զեղին տեն-
դը (yellow fever) գոյութիւն չունէր,
սակայն օդանաւերու միջոցաւ հոն փո-
խադրուեցաւ:

Գերմանիոյ մէջ արուեստական կա-
մա ճառագայթներ արտադրուեցան, որ-
ոնց ուժգնութիւնը Գոզմիկ կոչուած
ճառագայթներու կը հաւասարին. եւ
նոր հնարուած գործիքի մը շնորհիւ 20
միլիոն վոլդոյժով ելեկտրականութիւն
կ'արտադրուի: Ուստի՝ գիտունները
կը նախագուշակեն թէ կարելի պիտի
ըլլայ նիւթի ներքին զօրութիւնը առ-
նել և գործածել: Այն փրոֆէսորը՝ որ
այս գործին ձեռնարկեց՝ կրցաւ կառն
ճառագայթները արտադրել բւերեղա-
քար (beryllium) կոչուած մետաղը աղ-
փա կոչուած ճառագայթներու միջոցաւ

ումբակոծելով: Այս ումբակոծումի միջոցին բւերեղաքարը չի տարբաղադրուելի, այլ համադրութեամբ նոր նիւթի կը փոխուի: Այս կերպով կը յուսացուի տարր մը ուրիշ տարրի վերածել, երազ մը զոր իրականացնելու համար միջնադարեան ակթէմիստները այնքան զուր ջանքեր թափեցին:

Դարերու ընթացքին ծառեր հողին տակը թաղուելով, հոն նախ՝ հողածուխ, ապա թուխ ածուխ և ապա կակուղ հանքածուխ և վերջապէս կարծր հանքածուխ եղած են հողի ճնշումին տակ: Մինչեւ հիմա գիտուններուն գաղափարը այս եղած էր հանգածուխին կազմութեան մասին: Բայց հիմա նոր տեսութիւն մը մէջտեղ կը գնէ Գերմանացի Տր. Ֆրանց Ֆիշլըր, որուն համեմատ հանքածուխը երբեք զոյութիւն պիտի չունենար եթէ բոյսին մէջ յարմար բուսային նիւթերը և ճիշդ իրենց առանձնայատուկ պակտերիաներ (մանրէներ) զոյութիւն չունենային: այս երկուքին համադրածակցութեամբն է որ հանքածուխը կը շինուի գետնին տակը: Տր. Ֆիշլըր 30000 ոտք խորունկ գետնի տակ հանքածուխի մէջ ապրող պակտերիաներ գտաւ: Եւ Տր. Էրնսթ թէրէս ուրիշ Գերմանացի մը կըցաւ 2 տարուան մէջ արուեստական հանքածուխ շինել այս տեսութեան համեմատ:

Եգիպտոսի մէջ գտնուած պապիրոսէ մը կը տեղեկանանք թէ՛ այդ երկրին մէջ ասկէ 3500 տարիներ առաջ կ'ուսուցուէր բազմապատկութիւն և բաժանում. ասոր հետ մէկտեղ դպրոցներու աշակերտութիւնը կ'ուսանէր եռանկիւնի մը մակերեսութիւնը գտնելու կերպը: Այս պապիրոսի ձեռագիրը 18 ոտք երկայնութիւն ունի և թէրէ (Thebes) քաղաքին մէջ գտնուած է անցեալ դարուն:

Յիշեալ պապիրոսը սերտելով լաւ

մը կը հմտանանք 3500 տարի առաջ եգիպտացիներու թուաբանութեան մասին ունեցած ծանօթութեանը: Այս գիրքը կը գործածուէր ուսուցիչներու կողմէ, և մանաւանդ երկրաչափներէ՝ որոնք ասոր շնորհիւ բուրգի մը յատակագիծը կը պատրաստէին:

Եգիպտացիք, մեզի պէս տաս առ տաս կը համրէին. բայց զարմանալին սա է թէ տասնորդականով հաշուել չէին գիտէր: Բայց երբ խնդիր մը բարդ ըլլար այն ատեն շատ մը 10 նշանակող պատկերները իրարու քով դնելով իրենց հաշիւը կը կատարէին:

Եգիպտացի ուսանողի մը համար գիւրին էր գումարումը և հանումը, սակայն շատ խրթին էին իրեն համար բազմապատկութիւնը և բաժանումը: 2-րդ օրինակ 15ը 13ով բազմապատկելու համար ուսանողը կրկնապատկումի և գումարումի հետեւեալ երկայն գործողութիւնը կ'ընէր. —

1×15	հաւասար է 15
2×15	» » 30
4×15 (2×30)	» » 60
8×15 (2×60)	» » 120

Յետոյ նա կը գումարէր 8×15 ի, 4×15 ի և 1×15 ի արտադրեալները և կ'ոտանար 13×15 ին արտադրեալը:

Թէև այժմ կը ծիծաղինք այս մեթոտին վրայ, որ 3500 տարուան հնութիւն ունի, սակայն գիտենք որ Եւրոպայի միջին դարերուն նոյն դրութիւնը կը գործածէր. և Սիւրիոյ մէջ հիմա կան մահմետական ցեղեր որոնք նոյն մեթոտը կը գործածեն:

Ի բացառեալ երկու երրորդ կոսորակէն, միւս բոլոր կատորակները որպէս համարիչ 1 ունէին, և ասկէ կըրնանք հետեւցնել թէ՛ իրենց առօրեայ գործունէութիւնը ինչպիսի դժուարութիւններու կը բախէր:

Վերը յիշուածներէն զատ Պապիրոսի մէջ գտնուած են խնդիրներ հիմնուած

ՀՈՌՎՄ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԻՆ ԱՏԵՆ

Բ.

Քրիստոսի ժամանակակից Հոռվմի քաղաքացիին գրադումն էր արեւի տակ պառկել, ընտիր զինի խմել, պերճանքի և ճոխութեան մէջ յղփանալ՝ մինչ աշխարհի մնացած մասը կը հեծէր շըղթաներու տակ: Հոռվմայիցին մոռցած էր գործելն ու կոռելիլ, անիկայ կ'ապրէր գերիններու աշխատանքով: Ն. Ք. 27 թուականին Հոռվմի քաղաքացիներուն, ազատ մարդերուն, թիւը 320,000 էր, մինչ գերիններունը 900,000 էր:

Հոռվմայիցիին համար բոլոր աստուածները առասպելներ էին, հեաեաբար անիկայ գուրկ էր կեանքի մասին լաւատես գաղափարէ և զայն ապրելու համար ներքին ուժէ: Ահա քրիստոսի կրօնքը եկաւ անոր տայրելու ուժ տալու և զայն յեղաշրջելու համար: Զինապաշտ բիրտ ոյժի դէմ սէրը, հարըստութիւն, շռայլ և զրօսասէր կեանքով մը վատնելու գաղափարին դէմ զայն ուրիշներու հետ բաժնելու պատմութիւն, մարդը պատերազմներու մէջ փճացնելու գաղափարին դէմ մարդկային անձնաւորութեան արժէքն ու նըպատակը, բոլոր մարդերու հաւասարութեան գաղափարը սկսան տեղ գրաւել ժողովուրդին մէջ:

Հոռվմ մոլին էր վայրազ զբօսանք-

ներու և արիւննուշտ խաղերու: Տըրայանոս (Trajan) կայսեր հրամանով 10 հազար զոյգ սուսերամարտիկներ կրկէսը նեառեցան կոռելով մեռնելու համար, որ 123 օր տեւող տօնի մ'առթիւ ժողովուրդը զբօսցնեն: Այս կատաղի կռիւը ներկայ քաղաքակիրթ աշխարհի պիտիմ վերածուեցաւ Քրիստոսի կրօնքին ազդեցութեամբ, թէպէտ հարիւրաւոր տարիներ ետքը: Այս արիւնալի խաղերը վերջացան երբ քրիստոնեայ վանական մը, Տելեմաք անուն, ամփիթատրոնի զթեալէն ինքզինքը կըրկէսը նետեց այս անգութ խաղը դադարեցնելու համար: Տելեմաք իր արիւնլուայ դիակը ձգեց կրկէսին վրայ, բայց յազթանակը տարաւ: Սուսերամարտը դադարեցաւ անմիջապէս:

Բանտարկեալներուն հանդէպ դուրսը անձանօթ էր մինչև այն ատեն երբ քրիստոնեաները Հոռվմի մէջ իրարու օգնելու և կարեկցութեան ոգիով սոգորուած էին իրենց ընկեր արարածներուն հանդէպ: Այս քրիստոնէական ոգիին բնական մէկ արդիւնքն է կարմիր Սաշը, որ Քլարա Պարթընի կողմէ 1881 ին կազմուեցաւ նիւ եորքի մէկ փայտաշէն փոքր եկեղեցիին մէջ:

Բայց քրիստոնէութեան ազնուացուցիչ ազդեցութիւնը տեղի չաւ հասկնալու համար պէտք է գաղափար մը Հոռվմէական ընտանիքին, անոր մէջ հայրիկին բիրտ իշխանութեան, մայրիկին ստորնացուցիչ վիճակին և զաւակներու գիրքի հաւասար գիրքին մասին: Այս մասին պիտի խօսուի յաջորդ յօդուածին մէջ:

Թուաբանական և երկրաչափական յառաջատուութեան վրայ (progression)

Եզրպտոսի մէջ պեղուող գերեզմանաքարերուն վրայ վայելուչ կերպով դժագրուած է Փարառոններու գրագէտներուն պատկերները որոնք թագաւորին ցորենի հաշիւը կը պատրաստեն:

Քաղեց՝ Հ. ՓՈԼՍԵՆՆ

(Շարունակելի)

ՉԱՆԻՑԻ ԷՁԸ

ԵՐԻՏԱՍՏՐԴՈՒԹԻՒՆ

Ով իմ անձս, օրհնէ Տէրը, և Անոր բոլոր բարերարութիւնները մի՛ մոռնար. . . Որ կը լեցնէ քու ծերութիւնդ բարութիւնով և քու մանկութիւնդ արծիւին պէս կը նորոգուի: Սաղ. 103. 2, 5:

Երիտասարդութիւնը կեանքի շրջան մը չէ, այլ մտքի հանգամանք մը. հասուն այտերու, կարմիր շրթունքներու և դիւրաթիք, կակուղ տունկեցու վիճակ մը չէ, բայց կամքի տրամադրութիւն մը, երեւակայութեան յատկութիւն մը և զգացումներու առաջնութիւն մէջ: Ան կեանքի խորունկ զգացումներուն թարմութիւնն է:

Երիտասարդութիւն կը նշանակէ քաջութեան ներքեւ գերիշխանութիւն երկչոտութեան վրայ, յանդուգն դործի ակործակ մը հանգստութեան (ease) սիրոյն վրայ: Շատ տնգամ այս գոյութիւն կ'ունենայ յիսուն տարեկան մարդու մը մէջ քան թէ քսան տարեկան տղու մը մէջ:

Ոչ ոք կը ծերանայ այսքան թուով տարիներ ապրած ըլլալով. մարդիկ կը ծերանան մի միայն իրենց իտէալները ձգած ըլլալով: Տարիները կը կնճռտան մորթը, սակայն եռանդը և ջերմեռանդութիւնը կորսնցնել կը կնճռտէ հոգին: Հոգը, կասկածը, իր անձին հանդէպ անվստահութիւնը, վախը, յուսահատութիւնը — ասոնք են այն երկա՛ր, երկա՛ր տարիները որ կը ծռեն գլուխը և մեծցող, ուռճացող հոգին հողին կը դարձնեն:

Եօթանասուն ըլլայ կամ տասներկուց, ամէն անձի սրտին մէջ կայ հիացման սէրը, «վերջը ի՞նչ»-ի համար մանկական ակործակը և կեանքի ուրախութիւնն ու հաճոյքը:

Դուն՝ հաւատքիդ չափ երիտասարդ

և կասկածներուդ չափ ծեր ես: Անձնավստահութեանդ չափ երիտասարդ, վախիդ չափ ծեր, յոյսիդ չափ երիտասարդ, յուսահատութեանդ չափ ծեր ես:

Սրտիդ կեդրոնին մէջ անթելի կայաւորան մը ունիս: Որչափ ժամանակ որ գեղեցկութեան, յուսոյ, ուրախութեան, քաջալերութեան, վսեմի և զօրութեան պատգամներ կ'ընդունիս Անսահմանէն, երկրէն և մարդոցմէ նոյնքան երիտասարդ ես:

Երբ այս թելերը իր կեդրոնէն խզուելին, և դուն դադրիս պատգամներ ւստանալէ Աստուծմէ, և սրտիդ կեդրոնական մասը յոռետեսութեան ձիւնովը և անհաւատութեան սառովը ծածկուել, այն ատեն ծերացած ես:

Թարգմանութիւն

Ա. Փ.

ՉԱՅՆ ՄԸ ՀԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՒՄԸ

Հուպէքի վաղեմի մայր եկեղեցիին մէջ հետեւեալ արձանագրութիւնը կարէին տախտակի մը վրայ:

Այսպէս կը խօսի ձեզի Գրիստոս մեր Տէրը.

Դուք Ձիւ Տէր կը կոչէք, և Ինծի չէք հնազանդիր.

Ձիւ լոյս կը կոչէք, բայց Ձիւ չէք տեսներ.

Ձիւ ճամբայ կը կոչէք, բայց իմ մէջս չէք քալեր.

Ձիւ կեանք կը կոչէք եւ Ինծի չէք բաղձար.

Ձիւ գեղեցիկ կը կոչէք բայց Ձիւ չէք սիրեր.

Ձիւ իմաստուն կը կոչէք և Ինծի չէք հետեւիր.

Ձիւ յաւիտենական կը կոչէք, և Ձիւ չէք փնտռեր.

Ձիւ ողորմած, մարդասէր կը կոչէք և Ինծի չէք վստահիր.

Ձիւ վաճառ կը կոչէք, բայց ինծի չէք պաշտօնը:

Ձիւ հզօր կը կոչէք, բայց Ձիւ չէք յարգեր:

Ձիւ արդար կը կոչէք, և ինձմէ չէք վախնար:

Եթէ ես ալ ձեզ դատապարտեմ Ձիւ մի՛ մեղադրէք:

Թարգ.

ԱՐԱՔՍԻ ՓՈԼՍՏԵԱՆ

ԱՆՁՆԱՍԷՐ ԹԱԳԱՒՈՐԸ

Ժամանակաւ գեղեցիկ թագուհի մը թագաւորի մը նուիրեց թանկագին ուրուակ մը՝ լեցուն հիանալի հեղուկով մը զօր միայն ինք կրնար շինել և օրուն մէկ կաթիլը կրնար կեանքը երկնցնել անսահման կերպով:

Անգամ մը թագաւորին ծառաներէն մէկը մահամերձ հիւանդ ըլլալով այդ հեղուկէն կաթիլ մը խնդրեց: Թագաւորը մերժեց տալ ըսելով: «Ինչո՞ւ վառնեմ ես իմ թանկագին հեղուկս»: Օր մըն ալ իր խորհրդականներէն շատ բարի մարդ մը կաթիլ մը խնդրեց անկէ: Բայց նա մերժեց ըսելով. «Կաթիլի մը համար ինչո՞ւ բանամ իմ օրուակս»: Այսպէս մէկ կամ ուրիշ պատրուակով մը նա միշտ մերժեց այդ հեղուկէն տալ մարդոց իրենց կարօտութեան ժամանակ:

Վերջապէս օր մը թագաւորը ինքը պէտք ունեցաւ այդ հեղուկին: Արտօրնօք ծառան զրկեց և վարձխտէ շինք բերել տուաւ, դողդոջուն ձեռքին մէջ բռնեց զայն և հետզհետէ նուազող աչքերը սևեռեց այդ թանկագին օրուակին վրայ: Բայց աւա՛ղ, նա զոտու օր շինք պարապէր: Այդ կիսօտու հեղուկը որ ուրիշներէն պահած էր ցնդած էր բոլորովին:

ՁԱՆԻՑԻ ԼՈՒՐՆԵՐ

ՍԵԼԱՆԻԿԷՆ. — Եւրոպական Մեռնոյի օրը Ձանիցի Ընկ. յանձնախումբը Երեկոյթ մը սարքեց Տէար Լ. Յովակիմեանի բնակարանը, բացառիկ վայելքի տօրթ մը տալով մեզի: Ներկայ էին անդամ և համակիրներէն 85 հոգի: Ժամանակը խիստ հաճելի և շուտ անցաւ: Եղան վայելուչ խաղեր, զուսբճախօսութիւններ, երգեր և նուագ: Ընկ. յանձնախումբի կողմէ մասնաւոր կերպով պատրաստուած կատակախօսութիւն մը շատ խնդուք պատճառեց: Պատ. Ռուբէն Գալստեան օր իբր հիւր կը գտնուէր Սելանիկ՝ իր ներկայութիւնով և քաջալերական խօսքերով մեծ ազնօգտակար եղաւ:

Հայկական Մեռնոյի խթման գիշերը Ձանիցի անդամները խմբովին պաշտօնյան մինչև առաւօտ Մեռնոյի երգեր երգելով քառածայն: Այս երգերու հոգեւոր ազդեցութիւնը բնականաբան անդամները պահ մը խանդավառելով՝ մարդեգութեան խորհուրդին խկական ոգիին թափանցելու կ'առաջնորդէր: Օտար ընտանիքներէն շատեր ալ այս սուրբ եղանակներէն ազդուելով փափաք յայտնեցին որ խումբը իրենց սուներուն մէջ ալ երգէ: Նուէրներու հասոյթը յատկացուցաւ կարօտեալներուն:

Կիրակի առաւօտ մը երգչախումբին միանալով այցելեցինք քաղաքիս առաւորձաններէն Լէմպէթը և հոն կարգուած Մենդեան պաշտամունքին երգչինք պատշաճ երգեր:

ԳԱՀԻՐԷՆ. —

Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը, Ե. Բ. Ձանիցի ընկերակցութեան օժանդակութեամբ, ցերեկոյթ մը սարքեց 27 Դեկտեմբեր 1931 ին, Եկեղեցւոյս 12—30 աւերեկան եղօք երկսեռ երիտասարդութեան:

Յերեկոյթը տեղի ունեցաւ համայն-
քէս Տիար Ն. Զաւրճեանի բնակարանը:
Ներկայ էին 60 ի մօտ երիտասարդ ու
երիտասարդուհիներ, որոնք բոլորա-
կամէն նստած էին ընդարձակ սրահին
մէջ: Զայնագրի վրայ զեղեցիկ եղա-
նակներ իրարու կը յաջորդէին խան-
դավառութիւն մը ստեղծելով: Իսկա-
պէս հաճելի էր դիտել թարմ ու զուարթ
գէմքեր:

Վեր. Հ. Յ. Համբարձումեանին
բացման խօսքէն վերջ, ներկաները
հրաւիրուեցան թէյասեղանին: Թէյի
հետ հրամցուեցան Զանից ընկերակցու-
թեան օրիորդներուն կողմանէ պատ-
րաստուած ճօխ ու համադրած խմորեղէն-
ներ: Զանիցի իւրաքանչիւր մէկ անգամը
այդ օրը մասնաւոր պաշտօն մը ստանձ-
նած ըլլալով, սիրալոյսով կ'ապաստարկէր
թէյասեղանին: Թէյին յաջորդեցին
մէկ երկու անմեղ սակաւն խիստ զուար-
ճալի խաղեր: որոնք շատ հաճելի մըթ-
նոլորտ մը ստեղծեցին: Քիչ յետոյ,
Վեր. Համբարձումեան յայտարարեց
որ ցերեկոյթին երկրորդ մասին սկսած
է, և խօսեցաւ հրաւիրեց Զանիցի ան-
դամներէն չորս հոգի, որոնք տասնա-
կան վայրկեան ժամանակ թռնեալէ
վերջ, խօսեցաւ Փրոֆ. Յ. Թ. Գալսեան
մօտ քսան վայրկեան:

Նախ խօսեցաւ Տիար Խ. Յ. Կիւզէ-
լիմեան «Զանիցի ըմբռնումը կրօնքի
մասին» նիւթին շուրջ, և ցուցուց թէ
անմեղ հաճոյքներն ալ կրօնքի մէկ մա-
սը կը կազմեն: Հոգեկան զարգացու-
մով միասին մարմնով և մտքով զար-
գանալն ալ Զանիցի անդամներուն ի-
րաւունքն է:

Երկրորդ խօսողը եղաւ Օր. Գպուը-
եան «Եկեղեցին ինծի ի՞նչ ըրաւ» նիւ-
թին շուրջ և շատ անկեղծ և յուզուած
չեղանքով մէջ բերաւ իր անձնական
փորձառութենէն զրուակներ և եկե-
ղեցւոյն վերագրեց շատ մը շնորհքներ

զոր ինք ունէր այսօր:

Յետոյ խօսք առաւ Տիար Ն. Յ.
Կիւզէլիմեան, և խօսեցաւ «Զանիցի և
առեւտրական կեանքը» նիւթին շուրջ և
ցուցնելէ վերջ Զանիցի կատարելիք մեծ
գերը առեւտրական ասպարէզին մէջ,
յիշեց թէ Զանիցի անդամները պէտք է
ճանչցուն իրրեւ ճշմարտախօս, պար-
կեշտ, ազնւամիտ, խղճամիտ, խոստում-
նապահ և այլասէր անձեր:

Օր. Ա. Շաքարեան, «Զանիցի ինծի
ինչ ըրաւ» նիւթին շուրջ խօսեցաւ, իր
անձնական փորձառութենէն զեղեցիկ
պատգամներ մէջբերելով:

Փրոֆ. Գալսեան խօսեցաւ «Քրիս-
տոնեայ երիտասարդութիւնը և մեր ազ-
գային կեանքը» նիւթին վրայ: Յար-
գելի Փրոֆէսորը շատ վայելուչ կերպով
ցոյց տուաւ ազգային կեանքին մէջ
Քրիստոնեայ երիտասարդներու կաս-
րելիք կարեւոր գերը և իր անձնական
փորձառութիւններէն կենդանի օրի-
նակներ բերելով յորդորեց երիտա-
սարդները զործօն և օգտակար գերիւր
կատարելու ազգային և կրօնական աս-
պարէզին մէջ:

Վեր. Հ. Յ. Համբարձումեանի ա-
ղօթքով փակուեցաւ ցերեկոյթը և
ներկաները բաժնուեցան ռաբախ տրու-
մադրութեամբ և խոր ապաւորութիւն-
ներով համակուած:

ԼԻԻՍԻ Ն. ԿԻՋԵԼԻՄԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹԷՆ.

Նոր տարւոյ առթիւ տեղիս Աղջը-
կանց և Մանչերու Զանից ընկերութիւն-
ները Յնվր. Յ կիրակի կէսօրէ վերջ ընդհ.
պաշտամունք մը ունեցան, Ա. Հայ Ս-
ւեա. Եկեղեցւոյ մէջ: Նախ խօսեցաւ
Պրն. Վ. Սալիպեան նիւթ ունեւալով
կեանքը:

«Կեանքը իրականութիւն մըն է.
կեանքը շարունակական պայքար մըն

է. և ճիշդ այս պատճառաւ կեանքը դժուարատանելի և միանգամայն դառն բեռ մը նկատուած է շատերու կողմէ. և արդարեւ այդպէս է կեանքը առանց Քրիստոսի: Բայց երբ մեր կեանքը միացնենք, զօդենք Յիսուսի կեանքին, այն ատեն կեանքը կ'ըլլայ քաղցր և ապրիլը այնքան հաճելի:»

Ապա խօսեցաւ Պատ. Յ. Արգարեան նիւթ աւնենալով «Կեանքի Արժէքը»:

«Ինչպէս այլ բաներ նոյնպէս կեանքն ալ իր արժէքն ունի: Մարդոց գործերը և նկարագիրը ուսումնասիրելով կրնանք անոնց կեանքին արժէքը հասկնալ: Կան մարդիկ որոնց կեանքը արժէք մը չ'ունի. մարդոց բարօրութեան, բարձրացման և հոգիներու ազնուացման ձգտող կեանքը միայն կըրնայ արժէք ներկայացնել, և ամենատարժէքաւոր կեանքը Քրիստոսով միացած, հողին մէջ ինկած ցորենին պէս առատ պտուղ տուող կեանքն է:»

Երանի թէ նման ընդհ. պաշտամունքներ յաճախ տեղի ունենան. որով անդամները իրարու աւելի կը մեքձենան և անոնց սրտին մէջ կ'ստեղծուի ու կ'աճի համագործակցութեան գեղեցիկ ոգին:

Պէյրուք,

Ե. ԱՂԷԿԵԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՕՏԱՐ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԴՈՐԾՈՒՆԵՌՈՒ-
ԹԻՒՆ ՀԱՅԵՐՈՒ ՄԷՋ

1

Օր. Գ. Եփէ իր հայանպաստ գործունէութեամբը ծանօթ է հայութեան: Բնիկ Դանիացի է, և իր հայրենիքին հայաստանեայցի ընկերութեան կողմէ 1903ին կը զրկուի Ուրֆա, ուր, սակայն, առաւելապէս կը գործէ Դերմանացի Տր. Լէփսիուսի հիմնած հայանպաստ

պաստ գործին իբր ներկայացուցիչ պաշտօնեան: Ուրֆայի մէջ կը սորվի հայերէնը և կը մնայ հոն մինչև 1918, ականատես ըլլալով հայաշինչ արհաւիրի գործունէութեանց: Զինադարձնեալը կը դառնայ իր հայրենիքը հիւանդ վիճակի մէջ և հոն կը մնայ մինչև 1921: Նոյն տարին կը վերադառնայ Սուրիա և կ'ըբազի Հայ խլեակներու ազատագրման գործով, պաշտօն մը՝ որ իրեն յանձնուած էր Ազգերու Դաշնակցութեան կողմէ: Այս կերպով Օր. Եփէ անգնահատելի ծառայութիւն մատուցեր է: Այս շրջանին տարեկան 10—11 հազար Օսմ. ոսկի պիւտճէ մ'ունեցեր է: Ներկայիս այս գործը ձգած է, բայց Հայ օգնութեան խաչը կը ջանայ չափով մը շարունակել զայն իր սահմանափակ միջոցներով: Հիմա քսանհակ մը անապատէ ազատագրեալներ կը պատուարուին Հ. Օ. Խաչի հովանիին տակ:

Ազգ. դաշնակցութիւնը իր նպաստը դարեցուցած է, և Օր. Եփէ մի քանի տարիներէ իր հայանպաստ գործունէութիւնը կը պահէ Դանիացի, Դերման և Զուլիցերացի հայաստաններու նուէրներով: Այս շրջանին մինչև անցեալ տարի տարեկան մօտ 6 հազար Օսմ. ոսկի պիւտճէ մ'ունեցած է: Բայց ներկայ տնտեսական տագնապի պատճառաւ իր հասոյթի ազդեւորները մեծապէս նուազած են:

Օր. Գ. Եփէ ներկայիս, հակառակ հասոյթներու զգալի նուազումին, տակաւին ընդարձակ չափով կը վարէ իր բարեսիրական գործը զանազան մարզերու մէջ: Մօտ 200 որբեր իրենց մայրերուն քով կը խնամուին, իրենց բոլոր սնունդի և հագուստի պէտքերը զահացուելով Տր. Լէփսիուսի ընկերութեան օգնութեամբ: Ասոնք Օր. Եփէի կողմէ շինուած մասնաւոր շէնքերու մէջ կը բնակին: Ասոնցմէ զատ մօտ 150 որբեր մասնակի օգնութիւն կ'ստանան:

Օր. Գ. Եփէ մանուկներու կրթութեամբը ևս կը հետաքրքրուի: Դանիացի հայասէրներու օգնութեամբը մօտ 325 աղքատ աշակերտներ կը դաստիարակուին: Աղքատ աշակերտները կը շրջուին Մեսրոպեան և Սահակեան վարժարանները, իսկ որբերը Ուսումնասիրաց և Սահակեան վարժարանները:

Աղքատ հիւանդներ կը դարմանուին Զուրիցեացի հայասէրներու շրջած դըրամով: 1931 ի տեղեկագիրը տակաւին չէ պատրաստուած, բայց 1930 ի միջոցին 2000 հիւանդներ դարմանուած են: (Լիբանանի մէջ Պազիրի Կոյրերու վարժարան որբանոցը ևս Զուրիցեացիներու կողմէ կը պահուի):

Այս բոլորէն զատ Հալէպի մէջ ասեղնագործի ճիւղ մ'եւս կայ որ շատերուն գործ կը հայթայթէ: Արտադրուած կտորները առաւելապէս կ'սպառեն Տանիմարքայի մէջ:

Օր. Եփէ Հալէպէն դուրս ևս տարածած է իր բարեսիրական գործունէութիւնը: Ասկէ առաջ երկու Հայ գիւղեր հաստատած էր Տէր-Զօրի շրջանին մէջ Թէլ Էրմէն և Թէլ Սէմն անուաններով, հոս բնակութիւն հաստատած են Ուրֆայի մօտ Կարմուճի գիւղացիները: Նկատելով որ ա'լ ասոնք կրնան ինքզինքնին ապրեցնել՝ տնոնց տալիք իր նպաստը դադրեցուցած է, և այս անգամ երկու ուրիշ գիւղեր ևս հաստատած է: Եփէն է Էլ-Թինէ, Թէլ Ապեատի մօտ, բնակուած մեծ մասամբ անապատներէ աղատազրեալ որբ և որբուհիներով, որոնք իրարու հետ ամուսնութեամբ նոր ընտանիքներ կազմած են, երկրորդը կը կոչուի Ուտր Պըթրոս, որուն գետինը վարձու առնուած է:

Օր. Եփէ բոլոր այս հսկայ գործը կը վարէ 4 պաշտօնեաներով: Իր քարտուղարը նախկին Աւստրիոյ հպատակ Փոլոնիացի մըն է, Լէոփոլտ Կասթլըք անունով, որ ամուսնացած է խարբերոյցի հայուհիի մը հետ, և կը խօսի սահուն հայերէն՝ թէեւ չի կրնար կարդալ:

ԹՈՒՐԻՔԻԱՅԷ. — Պօյզ Հայ Աթուլի փոխտնօրէնը Մր. Ա. Քարլթըն կարճ ուղեւորութիւն մ'ունեցաւ Թուրքիոյ մէջ Տարսոն-Ատանա-Մարտին գծին վրայ:

Տարսոնի մէջ աւետարականները կը ունենան իրենց կանոնաւոր պաշտամունքները, որոնց կը մասնակցին 30-35 Հայեր՝ ամէն յարանուանութենէ, ժողովուրդէն մէկը կ'առաջնորդէ հաւաքոյթներուն: Տարսոնի Ամերիկեան Գուէճի մէջ կան 80 աշակերտներ որոնցմէ 50 ը գիշերօթիկ, քրիստոնեայ աշակերտները խիստ սակաւաթիւ են: Ատանայի մէջ եւս բողոքականները կ'ունենան իրենց պաշտամունքները Քաղզէացոց եկեղեցիին մէջ, կառավարական արտօնութեամբ: Հօս կը յաճախեն 70-75 ամէն յարանուանութենէ Հայեր: Կրօնական հաւաքոյթները կը վարէ Տիար Սաչատուր. . . . որ տեղական միաբնակներու և ժողովուրդին փափաքովը կը գործէ իբր արտօնեալ քարոզիչ մէկ տարուան համար: Ատանայի Ամերիկեան Աղջկանց վարժարանին մէջ կան 80 ուսանողուհիներ, որոնց 12-15ը քրիստոնեաներ են (մեծ մասամբ Հայ):

Մարտինի մէջ կայ զօրաւոր արաբախօս աւետարանական համայնք մը որուն 93 տարեկան հովիւը 67 տարեկան է ի վեր կը գործէ հոն:

Մր. Քարլթընի վկայութեան համեմատ քրիստոնեաները մեծ չափով ազատութիւն կը վայելեն երթեկուծութեան և առեւտուրի համար:

ՊՅՁ՝ ՀԱՅ ՍՔՈՒԼԷՆ (Հալէպ). — 1931 Դեկտ. 29 ին դպրոցին հոգաբարձութիւնը երկու նիստէ բաղկացեալ ժողովին մէջ լսեց հաստատութեան մասին տեղեկագրութիւնը և խորհրդակցութենէ

վերջ ընդգծեց յառաջիկայ տարուան պիւտճէն: Ուրախալի է որ այս տարի եւս կարելի պիտի ըլլայ նախորդ տարուան բոլոր հասոյթները ունենալ:

Յունի. 18, 1932 ին Մր. Ժիլէթ Այրա, Միսիս Է. Մէրիլի մէկ ազգականը, դպրոցս այցելած և Ափրիկէի մէջ իր գործին մասին խօսած է: Կ. Պոլսոյ Րոպէրթ Գուլէճէն Մր. Մէնինկ եւս դպրոցս այցելած և մրցում մը բացած է խոստանալով մրցանակ տալ «Գուլթ Անաստեններու Հանդէպ» նիւթ շուրջ գրողներուն: 20 գրութիւններ աշակերտութեան կողմէ արդէն յանձնուած են:

ՊէՅՐՈՒԹԷՆ Տիար Ե. Լ. Աղէկեան կը գրէ.—

Ս. Միսունգի պաշտամունքը տեղի ունեցաւ Յուն. 6 առտուան ժամը 9ին տեղացի Աւետ. Ա. Եկեղեցւոյ երիտասարդներուն համար կազմուած է կլոր սեղան մը կրօնական և ընկերային հարցերու շուրջ վիճաբանելու և լուսարտնուելու համար: Ունեցած են երկու հաւաքոյթներ Վեր. Ե. Կէօքկէօղեան թրքերէն լեզուով:

Մէկ երկու ամիս առաջ Պէյրութի Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ երիտասարդներուն համար կազմուած է կլոր սեղան մը կրօնական և ընկերային հարցերու շուրջ վիճաբանելու և լուսարտնուելու համար: Ունեցած են երկու հաւաքոյթներ Վեր. Ե. Կէօքկէօղեան թրքերէն լեզուով: Քրիստոնէական զրօսանք և ընկերային հարցերը: Առաջին հաւաքոյթին խօսած է Տիար Փ. Տէր Պօղոսեան, երկրորդին Տօքթ. Բ. Հատիտեան:

Զեռնարկը գովելի է եւ քաջալերութեան արժանի: Ի սրտէ յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթենք:

Ամսոյս 17ին տեղացի աւետարանականներու միժ Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ քաղաքի Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ անդամներուն Ս. Հաղորդութիւնը,

և փոքրիկներու Մկրտութիւն. տասի մօտ մանուկներ մկրտուեցան:

Այս եկեղեցւոյ պաշտամունքները հայերէն լեզուով կ'ըլլան. ամէն երեք շաբաթ անգամ մը թրքերէն քարոյզ կ'ըլլայ: Թրքախօսները յաճախ կը գանգատին հովիւին ըսելով թէ՛ իրենք հայերէն քարոզներէն չեն օգտուիր: Հովիւը եղած գանգատները իրաւացի գտնելով՝ ատենէ մ'ի վեր քարոզներուն կարեւոր կէտէրը թրքերէնի կը թարգմանէ, որ խկապէս գնահատելի է: Բայց աւելի լաւ կ'ըլլայ եթէ հովիւը պարզ թրքերէն բառեր գործածէ:

Աշխարհը ցնցող տնտեսական փոփոխութիւններու հետ ալ սկսաւ սուր հանգամանք ստանալ. անգործներու թիւը հեռիէն տէ կ'աւելնայ և առեւծախը աւելի կանուր վիճակ կ'ստանայ:

Բ. Գօմիւէրութեան Առողջապահական ընդհ. Տնօրէնութիւնը որոշած է այս տարի 500 տուն փրկել քարանձիւնայի Հայ քէմքէն: Ասիկա մեծ մտահոգութիւն պատճառեց յիշեալ քէմքի բնակիչներուն:

Ամսոյս 16 ին 27 Հայեր Յունաստանէն Պէյրութ ժամանելուն յետին ծայր թշուառ վիճակի կէջ. Բարեկործանի միջոցաւ հագուստ, ուտելիք և բնակարան հայթայթուեցաւ անոնց: Աստիք շատ գէշ և մութ գոյներով կը կը պատկերացնեն Յունաստանի դաղթական Հայերուն վիճակը: Դէպի Հայաստան ներդադրել մեծ օրհնութիւն և փրկագործութիւն կը նկատեն՝ այն տեղի Հայերուն համար:

ՍԵԼԱՆԻԿԷ կը գրէ Պատ. Կ. Ս. Ֆարահեան.—

Սելանիկի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Մանկանց Կիրակնօրէայ վարժարանը Կաղանդի առթիւ Միսունգի անդէս մը սարքեց:

Գեղեցկապէս դարդարուած Միսունգի

ծառը, Կաղանդի նսւէրներով ալ ծան-
րաբեռնուած էր: Բարեկամ մը ժամա-
նակին հաճած էր այս առթիւ տրուելիք
նսւէրներու ծախքերը նուիրել:

Կիրակնօրեայ Վարժարանի ուսուց-
չուհիներէն Օր. Ա. Սարեան և Օր. Է.
Գուլումճեան օրուան հանդէսը փայ-
լեցնելու համար վերջին ամսուան մէջ
իրենց կարելին ըրած էին:

Ուսանողներու երգած երգերը, Ա-
մանորի և Ծնունդի մասին իմաստալից
արտասանութիւնները, մանկական խա-
ղերը ծնողաց մեծ ուրախութիւն պատ-
ճառեցին: Իսկ Կաղանդ-Պապան իր նը-
ուէրներով ռաբխացուց պատիկները:

Ուսուցչական մարմինը ժողովուր-
դին բաշխեց՝ նախապէս ծնողաց համար
պատրաստուած մասնաւոր նամակ մը,
որով անոնց թէ՛ նոր տարին կը շնոր-
հաւորէին և թէ՛ իրենց նպատակը պար-
զելով անոնց աջակցութիւնը կը խնդր-
էին:

Վարժուհիները ջանապէս շնորհա-
ւորելի են իրենց անխոնջ աշխատանքին
համար: Անոնք միջազգային դժուարին
պայմաններուն ներքեւ նոր սերունդի
կրօնակրթական մակարդակը բարձրաց-
նելու դժուարին գործին լծուած են:

ՀԱԼԷՊԻ ԲԵԹԵԼ ԵԿԵՂԵՑԻԷՆ. —

Յաւնով. Տին Ուրբաթ կէսօրէ յետոյ
եկեղեցւոյս Կանանց Օժանդակ Միու-
թիւնը, Երկտասարգուհեաց Ք. Զանից
Ընկերակցութիւնը և Կրտսեր Աղջկանց
Ք. Զանից Ընկերակցութիւնը միասնա-
բար ընկերային հաւաքոյթ մը սարքե-
ցին Ծնունդի արձակուրդի առթիւով:
Ներկայ էին շուրջ երկու հարիւր հոգի-
ներ: Հաւաքոյթին կ'ատենապետէր Տիկ.
Ձէքիյէ Գամպուրեան՝ Կանանց Օժան-
դակի ատենապետը, Տիկ. Չագմագճեան
և Տիկ. Ս. Փօլատեան պարագային
յարմար սւղերձներ ըրին: Քսանի մօտ
կիներու երգած երգը և Տիկ. Զ. Գամ-

պուրեանի Տիկ. Խարաճեանի ընկերակ-
ցութեամբ զուգերգը՝ ներկաները շատ
զօհ ձգեցին:

Յաւնով. Զին, Շարաթ կէսօրէն առաջ,
եկեղեցւոյս վարժարանին աշակերտու-
թեան դարձեալ ընկերային հաւաքոյթ
մը սարքուեցաւ՝ վարժարանին անօրէ-
նուհի Օր. Պէրթա Կօփի կողմէ: Եկե-
ղեցիին և անօրէնուհիին ծախքով շուրջ
հինգ հարիւր մանուկներու շաքար և
նարինջ տրուեցաւ: Շատ խնամքով
պատրաստուած էր յայտագիրը, որուն
մէջ բաժին տւեցին բոլոր դասարանե-
րը, երգով մը կամ արապականութիւնով
մը:

ԹՂԹԱԿԻՑ

ԶԱՀԷԷՆ ՎԵՐ. Յ. Շնորհօքեան կը
զրէ

Յարութիւն Կ. Մազմանեանի մա-
սին, Հալէպ Պոյզ Հայ Միւլի սաներէն,
որուն մահուան պատճառ եղած էր ան-
կում մը (այս մասին տես «Ն. Աւետա-
բեր»-ի 1931 թիւ 20ը): Եւ ապա կը շա-
րունակէ նկարագրել անոր առաքելի,
քրիստոնէական սիրով ծառայող կեան-
քը, որ զինքը թէ՛ դպրոցին մէջ թէ՛ ե-
կեղեցիին (Զահէ) մէջ սիրելի ըրած էր:
Պատանին Մազմանեան մտադրած էր
հոգեւոր գործիչ ըլլալ: Ծնողները ի-
րենց շնորհակալութիւնը կը յայտնեն
Պ. Հ. Սքուլի և Էմմանուէլ Աւետ. Ե-
կեղեցիի անոնց ցոյց տուած կարեկցու-
թեան համար:

ՎԵՐ. Շնորհօքեան ապա կ'աւելցնէ.

«Կոիր սոսկալի յարձակում մ'ըրս և
մեր քաղաքին վրայ: Ամէն մարդ 4—10
օրեր անկողնի ծառայեց: Գրեթէ բո-
լոր ծերերը միւռան, օրական 2—7 հաս-
կայերէն մեռան երեք կիներ և երի-
տասարդ մը:

«Ծնունդի տօնը աննախընթաց եղաւ:
Փողոցներու մէջ ոչ մէկ զինով հայ մը
տեսնուեցաւ. տուններու մէջ չհանդի-
պեցայ մէկուն որ օղի հրամցնէ:»

Աթէնքէն կը գրէ Պատ. Յ. Տէր Ղա-
զարեան, Տէրկութիի Աւետ. Եկեղեցիին
ուսուցիչ-քարոզիչը:

«Այս տեղի կեանքը հայերուս համար
աւելի անկայուն վիճակ մը ստացաւ:
Հայաստան ներգաղթի պատճառաւ:
Հայաստան մեկնողներուն տուները կը
գրաւուին պետութեան կողմանէ և հոն
կը դրուին Յոյն գաղթականները: Իսկ
հոս մնացողներուն համար ալ ապագան
անորոշ և մութ է: Ամէն պարագային
մինչև 1935 Յունական կառավարու-
թիւնը վերջնական կարգադրութիւն մը
պիտի ընէ Հայերուն համար. կամ հպո-
տակութիւն և կամ արտագաղթ:

Տեղւոյս եկեղեցւոյ գործը կ'ընթա-
նայ իր բնական հունին մէջ: Ունինք
230 անձ, 87 եկեղեցւոյ անդամ (այր ու
կին): Կիրականօրեայ Դպրոցին մէջ կը
դաստիարակուին 175 աշակերտներ,
իսկ նախակրթարանի մէջ (մանկապար-
տէզն ալ մէջը ըլլալով) կը գտնուին 210
երկսեռ աշակերտներ՝ որոնցմէ 11 ը Հա-
յաստան մեկնած են:

ՎԵՐ. ՅԱԿՈԲ ԳՈՒՄՐՈՒԵԱՆ, որ 18
տարիներէ իվեր չաքարախտէ կը առ-
նապէր, Յունով. 24, Կիրակի իրիկուան
դէմ իր մահկանացուն կնքեց Հալէպ,
իր փեսային՝ ատամնաբոյժ Տիար Ստե-
փան Բուպեանի՝ տունը: Յուդարկա-
ւորութեան օխուր հանդէսը կատար-
ուեցաւ Էմմանուէլ Աւետ. եկեղեցիին
մէջ Վեր. Ա. Ս. Մանուկեանի կողմէ,
երկուշաբթի կէսօրէ առաջ, ազգական-
ներու, բարեկամներու, գործակիցներու
հոծ բազմութեան մը մասնակցութեամբ:
Վեր. Կ. Յարութիւնեան, Վեր. Կ. Շի-
րաճեան, Վեր. Կ. Քէթէնճեան, Վեր.
Ակիւլեան, Մր. Ա. Քարլթըն և Վեր.
Ս. Ս. Մանուկեան դամբանականներ
խօսեցան իվեր հանելով հանգուցեալին
բարեմասնութիւնները և ծառայութիւն-
ները, և տալով պարագային յարմար

հոգեւոր պատգամներ: Էմմանուէլ Ե-
կեղեցիի երգիչ խումբը իր բաժինը բի-
րաւ երեք հոգեւոր երգերու երգեցո-
ղութեամբ:

Վեր. Յ. Գումրուեան երիշապոյն
անդամն էր Սուրիոյ Հայ աւետարանա-
կան գործիչներուն: Շատ ցաւով է
որ անոր կենսագրական գիծերը ճիշդ և
լման տալու համար պէտք եղած ծա-
նոթութենէ յաւատարմութեամբ և հա-
գուցեալը իր հետ գերեզման տարած
ըլլալով զանաք: Վեր. Յ. Գումրու-
եան ծնած է Մարաշ ասկէ մօտ 80 տարի
առաջ: Իր հայրը կանուխէն աւետա-
րանականութիւնը ընդգրկելով մանուկ
Յակոբ կը մեծնայ աւետարանական
չունչով: Երբ 17 տարեկան էր ջերմ
փափաքը կ'ունենայ հոգեւոր գործիչ մը
ըլլալու: Այդ ատեններ տեղի ունե-
ցող հակաբողոքական սաստիկ հալա-
ծանքներու կ'ենթարկուի ինքն ալ,
բայց իր որոշման մէջ հաստատ մնալով
Մարաշի Աստուածաբանական ճեմարա-
նէն ուսումնաւարտ կ'ըլլայ 1880 ինք:
Այս թուականէն սկսեալ մինչև 1931
Վեր. Յ. Գումրուեան կը ծառայէ գրե-
թէ անընդհատ: Իր գործած վայրերն
են Զէյթուն, Քէսապ ուր 1889 ին հո-
վիւ կը ձեռնադրուի, Մարաշի եկեղե-
ցիները, Այնթապի Գ. Հայ Աւետ. Եկե-
ղեցին, Քիլիս, Սիս՝ ուսկից տարագ-
րութեան առթիւ կ'ուզայ Հալէպ և կը
հիւրընկալուի իր փեսային տունը: Իր
հիւանդութիւնը յառաջացած ըլլալով
վերջին մի քանի տարիներէ ի վեր բը-
նականութիւն հաստատած էր Պիթիաս
ուր՝ սակայն, նորէն անգործ չի մնար
բեմի պարապ եղած ժամանակներուն
քարոզելով և ուրիշ կերպ ծառայելով:
Հերոս աշունը վերջնականապէս եկաւ
Հալէպ:

Վեր. Գումրուեան զօրաւոր մարմի-
նով, և իմացականութեամբ օժտուած
և գործելու անմար եռանդով տողոր-

ուած, միշտ ժպտադէմ, միշտ կորովի և անվհատ գործիչ մը եղած է՝ հակառակ շատ մը ձախողութեանց, կեանքի դառնութեանց և հալածանքներու։ 1895 ի ջարդերուն առթիւ, երբ բոլոր յայտնի ղեմքերը բանտը կը գտնուէին շնորհիւ իր կառավարական բարձր պաշտօնեաներու հետ խօսակցութեան եզր մը գտնուելու կարողութեան՝ ինքը ազատ մնացած էր և բոլոր հայերու ազգային եկեղեցական պէտքերուն պահպանման տալու կ'աշխատէր։ Այդ միջոցին Մարտի մէջ Վեր. Ճեննեանի զրկած զըրաժով պահուող որբանոցին հայերէն եղած էր։ Տարագրութեան միջոցին անոնցին ծառայութիւն մատուցած է կարօտներուն դրամ բաշխելով, աշխատ փափուկ գործ մը որ շատ զիրութեամբ կրնար կատարուիլ հրաւիրել իր վրան և իր գոյութեան վտանգել։ Վեր. Յակոբ գումրուեանի մահով աւետարանական առաջին կրօններ սերունդէն զսրծիչ մ'ալ կ'անհետանայ։ Որչափ թանկագին ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան այս առաջին սերունդին և երկրորդ սերունդին պատկանող յարգելի աշխատաւորները՝ իրենց յուշիկը եթէ գրի առնէին։ Մեր անցեալը պերեզմանի մէջ չթաղենք։

ՀԱՆԻՊԻ Հայ Առաք. Եկեղեցիի Մանկանց Կ. Դպրոցին վկայականաց բաշխումի հանդէսը կատարուեցաւ Հայ Ազգ. Մանկապարտէզի սրահը Յունի. 24 ին. Բեմին վրայ կը տեսնուէին Տ. Ներսէս Հայր. Թաժուզճեան, Տիար Լ. Ջէնեան և դպրոցին տեսչուհին Տիկին Է. Մաթոսեան որ յայտարարելու կը վարէր։ Ապա Գեր. Ա. Եպս. Սիւրմէեան ևս գայով նախագահեց հանդէսին։ Սկսնակ, Կրօնի և Միջին բաժիններու այն երկուսն աշակերտութիւնը որ իրենց եւամեայ դասընթացքը աւարտած էին շարքով ներս եկան։ Եղան հոգե-

ւոր և բարոյական արտասանութիւններ, շարականներու և ուրիշ հոգեոր երգերու երգեցողութիւն և նուազ Խօսեցան Տ. Ն. Հ. Թաժուզճեան, Տիար Լ. Ջէնեան, և Առաջնորդ Սրբազանը, որ բաշխեց վկայականները։ Սրահը լեցնող ժողովուրդը շատ զոհ տպաւորութեամբ բաժնուեցաւ։ Ուրախութեամբ կը տեղեկանանք որ Տամասկոսի մէջ ևս նման Կ. Դպրոց մը կազմակերպուած է։

ԼԻԲԱՆԱՆԻ կառավարութեան կատարած վիճակագրութեան համեմատ (որ տակաւին սրբազրիւ է) երկրին բնակչութեան թիւն է 800,000, Պէյրութինը՝ 179,000, որուն ճճ հազարը քրիստոնեայ, 20 հազարը օտարներ, 73 հազարը իսլամ, Տիւրքի և Հրեայ են։ Մայրաքաղաքի Հայերու թիւն է 24000, որուն մէջ հաշուած չեն կ'երեւի Հայ Աւետարանականները։

ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ներգաղթի առաջին կարաւանը, ինչպէս որ թերթերը գրեցին, 2000 ի մօտ գաղթականներէ և Բարեգործականի սաներէ բաղկացած, Աթէնքի նաւահանգիստէն ճամբայ ելաւ 1931 Դեկ. 30 ին. Յունական 8000 թոնո տարողութեամբ Իտէոս նաւով և Պաթում հասաւ Յունի. 6 ին. Նաւը սրամագրուած էր Հելլէն կառավարութեան կողմէ և ճամբու ծախքը հայթայթուած էր Բարեգործականէ եւ Նանսէնեան ֆոնտէ, Յունի. 10 ին և 11 ին երկու կարաւանով գաղթականները մեկնած են Երևան զիրենք ղրմաւորող կառավարական յանձնախումբի ստաջնորդութեամբ։ Ներգաղթի 2400 հոգինոց երկրորդ կարաւանը պիտի կազմուի Աթէնքի գաղթականներէն և Փետր. 15 ին մեկնած պիտի ըլլայ ըստ յայտարարութեան։

ՆՈՐ ԱՒԵՏԱՐՈՒ

FURST McNESS Ի ԱՌՈՂ-ԶԱՊԱՀԱԿԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն
ու շինիչ ազդեցութեամբը,

աւստի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրարութեական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն

Furst mcness'

EXTRACT OF COD LIVER OIL TONIC

կոչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան լուղ (կենսահիթ
«Ա» և «Դ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր գինի, երկաթ, մանկանէզ,
և այլն:

Մեծապէս ԱՆՈՐԺԱՀԱՄ է, ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԴՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿՈՒԺՈՎՑՆԷ:

ՀԱՁ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթեր և
միջոց:

Բորբոսած եւ գրգռուած կոկորդի քաղանքներու վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժախամ եւ անուշ է:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

صاحب الامتياز والمدير المسئول القسم. ق. هاروتونان